

ՕՐՈՒԱՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԵՏ

ՉԱԽՈՂԱԾ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՍԸ ԱՌԹԻ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Աւելի քան ամիս մը անցած է Հայ-թրքական երկու Արձանագրութիւններու հրապարակումէն ու հայութիւնը կը շարունակէ մնալ կլանուած այս հարցի շուրջ տեղի ունեցող զարգացումներով: Ստեղծուած նոր իրավիճակը արեւոտեան է մեր ժողովուրդը եւ Հայաստանի ու սփիւռքի տարածքին մարդիկ պատասխաններ կը փնտռեն իմանալու համար թէ, ինչու իշխանութիւնները կը դիմեն նման արկածախնդրութեան մը, որու հետեւանքները, իրենց իսկ խոստովանութեամբ, անկանխատեսելի են ու բաւական անորոշ:

Կիրքերը առաւել բորբոքած են սփիւռքի տարածքին, ուր ժողովուրդը աւելի ազատ պայմաններու տակ, շատ աւելի լաւ տեղեկացուած է ու կը գիտակցի թէ ինչքան սուղ գին պիտի վճարէ մեր ազգը՝ Հայաստան-թուրքի սահմանի բացման եւ դիւանագիտական շարաքերութիւններու հաստատման դիմաց: Ահաւաստիկ այս միջոցառումին մէջ է որ, Պր. Սերժ Սարգսեան սկսաւ իր շրջագայութիւնը սփիւռքի հայաշատ կեդրոնները եւ անմիջապէս հանդիպեցաւ տաճ անակնկալներու, որոնք դրսեւորուեցան բողոքի ցոյցերով եւ պոչքոթներով:

Առաջին աւթիւ պէտք է արձանագրել, որ «Նախագահի համահայկական ուղեւորութիւնը», որու մասին օրերով կը շեփորահարէին Հայաստանի իշխանամէտ լրատուամիջոցները, սխալ մտածուած ու ուշացած քայլ մըն էր, որովհետեւ տեղի կ'ունենար Արձանագրութիւններու ստորագրումէն կարճ ժամանակ առաջ եւ ինչպէս նախագահը կ'ըսէր, այդ արձանագրութիւնները ենթակաջ չեն փոփոխութեան:

Այս այցելութիւնները անպատակալարմար էին այլ պատճառներով եւս: Սփիւռքի լայն գանգոլուծներու յիշողութեան մէջ տակաւին թարմ են կեղծուած նախագահական ընտրութիւնները ու անոր յաջորդող արիւնալի դէպքերը, որուն գոհ գացին առնուազն 10 անմեղ հայեր, իսկ Հայաստանի բանտերը լեցուեցան քաղաքական բանտարկեալներով: Այս պայմաններուն տակ, անիմաստ էր նման շրջագայութեան մը նախաձեռնելը:

Հետեւաբար, Փարիզի, Նիւ Եորքի, Լոս Անճելըսի ու Պէյրութի մէջ Սարգսեան արժանացաւ ընդունելութեան մը, որ վալել չէր Հայաստանի ղեկավարի մը: Հայրենիքէն եկող նախագահ մը պէտք է դառնայ համախմբման ու հպարտութեան առիթ: Իսկ, այս այցի պարագային, ոչ միայն պառակտուած յառաջացաւ գաղութներու մէջ գործող կազմակերպութիւններու միջեւ, այլ նաեւ՝ նոյնիսկ շատ մը կազմակերպութիւններու ներսը: Պառակտում իրարացաւ նաեւ Հայաստանի իշխանութիւններուն ու սփիւռքի միջեւ, որու հետեւանքները ի յայտ պիտի գան յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն:

Կը տարուինք մտածելու

թէ, Հայաստանի իշխանութիւնները բաւականաչափ տեղեկացուած չեն սփիւռքի մասին ու կը խորհէին թէ, հոն եւս ամէն ինչ կարելի է առնել վերահսկողութեան տակ ու «Հ1» «պետական» հեռատեսիլի ալիքով համոզել Հայաստանի ժողովուրդին, որ Հանրապետութեան առաջին դէմքը կը վալել նաեւ սփիւռքի աջակցութիւնը՝ Հայ-թրքական շարաքերութիւններու կարգաւորման գծով: Այլ կերպ կարելի չէ տեղաւորել այս այցի նպատակը: Այս այցելութիւնը ունէր խոցելի այլ երեւոյթ մը եւս, որ հարցականի տակ կը դնէ Հայաստանի պետութեան կառուցն ու սահմանադրական կարգը: Սփիւռք այցելող նախագահական շքախումբին մէջ ընդգրկուած էր նաեւ երկրի գերագոյն դատարանի՝ Սահմանադրական Դատարանի նախագահը: Գաղիկ Յարութիւնեանի ներկայութիւնը Սերժ Սարգսեանի կողքին, թէկուզ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի փոխ-նախագահի իր հանգամանքով, անընդունելի է ինքզինք օրէնքի երկիր հռչակող որեւէ պետութեան համար, ուր պէտք է գործէ դատական իշխանութեան ամբողջական անկախութիւնն ու տարանջատումը գործադիր իշխանութեանէն:

Գաղիկ Յարութիւնեանի գլխաւորած դատարանը, կոչուած է մօտ օրէնքներու թէ, արդեօք Հայ-թրքական Արձանագրութիւնները կը համապատասխանեն Հայաստանի Սահմանադրութեան: Սատարելով այդ Արձանագրութիւններու պաշտպանութեան Պր. Յարութիւնեան ոչ միայն հարցականի տակ կը դնէ իր առնելիք որոշումը, այլեւ, աւելի կը վարկաբեկէ Հայաստանի Սահմանադրական Դատարանը, որ արդէն իսկ, բազմաթիւ առիթներով փաստած է իշխանութիւններուն կամակատար ըլլալու իր պատրաստակամութիւնը:

Որպէս անմիջական հետեւանք Յեղասպանութեան ու իրաւայաջորդը անոր գոհերուն, սփիւռքը պատրաստ չէր ընդունելու իշխանութիւններուն կողմէ ամիս մը առաջ հրամայուած անակնկալը՝ երկու արձանագրութիւններու տեսքով, ուր եթէ նոյնիսկ չկան նախապայմաններ, ինչպէս կը պնդեն իրենք, առնուազն կան ԱԿԱՆՆԵՐ, որոնք ենթակաջ են ամէն քայլափոխի պայթելու մեր ժողովուրդի երեսին:

Այս, եւ բազմաթիւ այլ պատճառներով, նախագահական շրջագայութիւնը կարելի է նկատել ձախողած, յուսալով որ Երեւան վերադառնալով, առաջին հերթին Պր. Սարգսեան ինք անձնապէս, ճիշդ հետեւութիւններ կը կատարէ ու ապա հաշտութեան ձեռք կ'երկարէ իր իսկ երկրի ժողովուրդին, երկխօսութեան կը սկսի ընդդիմադրութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ ու ներքնապէս իր թիկունքը ապահովելէ ետք միայն, թուրքիոյ հետ կը ձեռնարկէ նոր բանակցութիւններու:

Այն ատեն Նախագահ Սերժ Սարգսեան իր կողքին կ'ունենայ նաեւ սփիւռքը իր բոլոր հատուածներով ու շերտերով:

ԵԿԱԻ, ՏԵՍԱԻ, ՆՈՒԱՏԱՑԱԻ

ՅԱՐՈՒԹՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Ուրիշ ինչպէ՞ս կարելի է նկարագրել Սերժ Սարգսեանի այցելութիւնը Լոս Անճելըս:

Ինչ կ'անցնէր իր գոռոզ մտքէն, երբ կը ծրարէր այս այցելութիւնը: Լոս Անճելըսը, անցնող աւելի քան 10 տարիներու ընթացքին, Հայաստանէն ներս կատարուած ընտրական եւ այլ անիրաւութիւնները քննադատող սփիւռքահայ համայնքներու ախոյեանն էր: Ռոպերթ Քոչարեան կրնար Հայաստանի մէջ քուէարկողներու ջախջախիչ մեծամասնութիւնը «շահիլ», բայց Լոս Անճելըսի մէջ քանի մը տոկոսէն աւելին չէր կրնար ապահովել, բացառապէս չէր Հայաստանի ընտրութեանց «ազատ արդար» իրականութիւնը: Այդ պատճառաւ, քուէարկութեան օրէնքներուն մէջ փոփոխութիւններ կը մտցուէին վերացնելով Հայաստանէն դուրս գտնուող քաղաքացիներու քուէարկութեան իրաւունքը: Այդ պատճառաւ Ռոպերթ Քոչարեան չէր համարձակէր Լոս Անճելըս այցելել:

Բայց Սերժ Սարգսեանը Ռոպերթ Քոչարեան չէր: Պիտի այցելելու ըլլալու մեզ իր շաքարապատ բայց սին խօսքերով, ինչպէս վարժ էր ընել Հայաստանի մէջ: Իր իջեւանած հիւրանոցի պատշգամբէն յոխորտանքով պիտի դիտէր իր դէմ ցոյցի եկած հազարաւոր հա-

յորդիները որպէս զի քիչ ետք, խումբ մը Լոս Անճելըսահ ներկայացուցիչներու առջեւ հարցումի մը պատասխանելով ամբարտաւանօրէն ըսէր, թէ ինք կը սպասէր այդ ցոյցին եւ թէ եկողներու թիւը շատ քիչ էր բաղադրամամբ Լոս Անճելըսահայութեան ընդհանուր թիւին... Ու քիչ ետք պիտի մտնէր նոյն հիւրանոցին մէջ իրեն ի պատիւ տրուած ճաշկերոյթ-հիւրասիրութեան, ապահար ըլլալու համար որ նոյնիսկ այդ 500 հոգինոց սրահը կարելի չէր եղած լեցնել, հակառակ անոր որ մուտքը անվճար էր... Պիտի լիշէր որ մօտ 15 տարիներ առաջ, բազմահազար Լոս Անճելըսահայեր խուռներամ դիմած էին քաղաքիս համագումարներու կեդրոնը, ոչ թէ անվճար ճաշ ուտելու, այլ պարզապէս ունկնդիր ըլլալու առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի խօսքերուն եւ միլիոնաւոր տոլարներու նուիրատուութիւններ ընելու: Ու պիտի մթազնէր իր հոգին, ի տես այդ նուաստացումին: Պիտի ջնջէր յաջորդ առաւօտեան հեռուստասիւներու 3 նշանակեալ կայաններու հետ ցուցադրական հանդիպումն իսկ: Պիտի չի համարձակէր այցելել Մոնթեպելլոյի Եղեռնի յուշարձան, որպէս զի չի կրկնուէր այն ինչ պատահեցաւ Փարիզի մէջ:

Եկաւ հեզնելու եւ յոխորտալու մտքով: Մեկնեցաւ նուաստացած:

ԳԱԼՈՒՍԻ ՏԵՐՆ ՈՒ ԵՐԱՇԽԱՒՈՐԸ

ԵՂԻԾԷՄԵՍԱՐԵՆՑ

Այն, որ Գալուստ Սահակեանի համար սփիւռքում Սերժ Սարգսեանի դէմ բողոքի ցոյց անող մեր հայրենակիցները տակաւն են, դա միանգամայն բնական է եւ օրինաչափ: Բա էլ ինչ պիտի լինէին այդ հայրենակիցները Գալուստ Սահակեանի համար: Սահակեանի համար նրանք չօ ազգային հերոս կամ իմաստնութեան աղբիւր, կամ էլ համարձակ, լայն ու գերժամանակակից մտածողութեան տիպար չէին համարուի: Չէ որ սփիւռքի մեր հայրենակիցները չեն, որ Գալուստ Սահակեանին ապահովում են իր երթուղային գծերի անպակասութեամբ, որ Գալուստ Սահակեանին, նրա հարազատ-բարեկամներին, նրանց բիզնեսները պաշտպանում են օրէնքից եւ քաղաքացիական ցանկացած արժէքից: Իհարկէ, Գալուստ Սահակեանի համար տակաւն են բոլոր նրանք, ովքեր համարձակոււմ են որեւէ թթու բան ասել նրա բարեկեցութեան, նրա անվտանգութեան երաշխաւոր Սերժ Սարգսեանին: Այնպէս որ, պէտք չէ զարմանալ եւ զայրանալ Գալուստ Սահակեանի վրայ, որ նա Սերժ Սարգսեանի դէմ բողոքող սփիւռքահայերին համարում է տակաւնք:

Աւելին, Սերժ Սարգսեանը նոյնիսկ կարող է նախատել Գալուստ Սահակեանին, որ նա բաւականաչափ ախիւ չէ սփիւռքում իր նախագահի պաշտպանութեան հարցում: Բանն այն է, որ Գալուստ Սահակեանը պէտք է Սերժ Սարգսեանից առաջ լինէր Փարիզում, փայտը կամ որեւէ ձող ձեռքին հեռացնել կոմիտասի արձանի մօտ հաւաքուած սփիւռքահայերին: «Բա Գալուստ Սահակեանը մեռած է, որ ինքը Երեւանում նստած, Փարի-

զում ֆրանսիացի ոստիկանները պէտք է պաշտպանեն Հայաստանի նախագահի: Գալուստ Սահակեանի բարեկեցութեան ու անվտանգութեան երաշխաւորի անվտանգու-

Շարք էջ 3

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱՌԵՐԻԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արևմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ
ՍԱՅԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԻԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
3 ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ը ՀՐԱԺԱՐՈՒԵԼ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻՆ

Հայ Ազգային կոնգրեսը (ՀԱԿ), ինչպես «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց ընդդիմադիր դաշինքի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեանը, մերժել է Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւնների մշտական յանձնաժողովի հրաւերը՝ մասնակցելու հայ - թուրքական արձանագրութիւնների վերաբերեալ Հոկտեմբերի 1-ի խորհրդարանական լսումներին:



Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսինեան

«Հայ ազգային կոնգրեսը բացարձակապէս ցանկութիւն չունէր իմիտացիոն պրոցեսներին մասնակցելու: Այս իշխանութիւնը իր համաձայնութիւնը տուել է այս խայտառակ փաստաթղթին եւ գնալու է ինչօք ստորագրելու է հայ-թուրքական արձանագրութիւնները: Իսկ խորհրդարանը, ինչպէս միշտ, կամակատարի նման վաւերացնելու է, - ասաց Մուսինեանը:

Նա եւս մէկ անգամ շեշտեց, որ արձանագրութիւնների ստորագրումը կանխելու մէկ տարբերակ կայ, հասարակութիւնը պէտք է ստիպի Սերժ Սարգսեանին հրաժարական տալ:

Անդրադառնալով նախագահ Սերժ Սարգսեանի՝ նախօրէին Հանրային խորհրդի անդամների հետ հանդիպմանը ունեցած ելոյթում հնչեցրած յայտարարութիւնը, թէ նախատրագրուած արձանագրութիւններում ամրագրուածը առաւելագոյնն է, ինչ Հայաստանը կարող է ստանալ այս փուլում՝ Արման Մուսինեանը նկատեց, թէ դրանում «ճշմարտութեան հատիկ կայ»՝ պարզաբանելով. - «Երբ փողոցում գնդակահարում են 10 մարդ, ստանում են այսպիսի փաստաթուղթ, կը գնդակահարէին 20 մարդ՝ կը ստանային է՛լ աւելի խայտառակ փաստաթուղթ: Շուրջ երկու տարի երկրի ներսում տիրող տեւորի հետեւանքը՝ կեղծուած ընտրութիւնների, գնդակահարուած քաղաքացիների, քաղաքական հալածանքների, ամենօրեայ անարդարութիւնների հետեւանքը պէտք է լինէր այս փաստաթուղթը»:

Հակադարձելով յայտարարութիւններին, թէ նախատրագր-

ուած արձանագրութիւնները փոխդիման արդիւնք են՝ Մուսինեան ասաց, թէ «կոպրոմիսը եւ անհատոց նուէրը տարբեր հասկացութիւններ են»:

«Կոմպրոմիսային լուծումները քաղաքականութեան մէջ ընդունուած եւ ճիշդ լուծումներ են, բայց սրանք կոմպրոմիսներ չեն. դրանք անհատոց նուէրատուութիւններ են: Յատկապէս՝ պատմաբանների յանձնաժողովը, որով, ըստ էութեան, Սերժ Սարգսեանը սկսուտեղի վրայ Յեղասպանութեան ճանաչման հարցը մատուցել է թուրքիային», - յաւելեց նա՝ շարունակելով. - «Ես չեմ ուզի շատ ծաւալուել, ես կարող եմ միայն ասել, որ այս պատմաբանների յանձնաժողովը դառնալու է փորձանք Յեղասպանութեան ճանաչման գործընթացի համար: Փորձանք, ոչ թէ խոչընդոտ»:

Մուսինեանը եւս մէկ անգամ բարձրաձայնեց իրենց պնդումը, թէ ինչպէս հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում, այնպէս էլ Լեւոնային Ղարաբաղի հարցում իշխանութիւնները գնալ եւ են զիջումների, որպէսզի պահպանեն իրենց իշխանութիւնը. - «Անցաւ մէկ տարի, եւ հայ-թուրքական յարաբերութիւններում դա ապացուցուեց: Կ'անցնի եւս որոշ ժամանակ, ես սա ցաւով եմ ասում՝ բայց կը լինի նաեւ այն, ինչ մենք ասել ենք Ղարաբաղի հետ կապուած»:

ԸՍՏ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԻ «ԱՓԻՒՔԻ ԸՆԴԿՁՈՒՄԸ ԱՆԿԵՂԾ ՉԷ»

«ԱՅԲ-ՖԷ»: Սերժ Սարգսեանի համահայկական շրջապայութեան ընթացքում Սփիւռքում թափ առած բողոքի այլքը Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ Կարէն Աւագեանը համարում է կեղծ եւ էմոցիոնալ: Այս կարծիքը նա յայտնեց Հոկտեմբեր 6-ին «Հայելի» ակումբում կազմակերպուած մամուլի ասուլիսի ժամանակ: Ասուլիսին մասնակցում էր նաեւ «Ժառանգութիւն» իմբաստանութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը:

«Յուցարարների մեծ մասը նոյնիսկ չի կարգացել հայ-թուրքական նախատրագրուած արձանագրութիւնները եւ սխալ ինֆորմացուած լինելով՝ բողոքի ցույցեր է կազմակերպում», - ասաց Կարէն Աւագեանը՝ նկատելով, որ այդ աղմուկը բարձրացել են նրանք, ովքեր հարցը շահարկում են սեփական անձնու քաղաքական ուժը փրկելու համար: Ստեփան Սաֆարեանը, հակառակը, գտնում է, որ չի կարելի էմոցիոնալիզմ համարել ցեղասպանութիւնը վերապրածների ժառանգների արդար պահանջը: «Եթէ միայն ընդդիմութիւնը դէմ լինէր այդ փաստաթղթին, միգրացի ասէինք՝ լաւ, բայց մեղադրել ցեղասպանութիւնը վերապրածների ժառանգներին անգիտութեան մէջ՝ անսաց նա:

ուսններին անգիտութեան մէջ՝ անսաց նա:

«Հայելի» ակումբում բանախօսների գրոցի հիմնական թեման հայ-թուրքական յարաբերութիւններն ու սահմանների վերաբացումն էր:


Հանրապետական Կարէն Աւագեանը կողմ արտայայտուեց առանց նախապայմանների յարաբերութիւնների կարգաւորմանը, յետոյ նկատեց, որ նախատրագրուած արձանագրութիւններում որեւէ նախապայման չկայ թէ՛ ցեղասպանութեան, թէ՛ ԼՂ կարգաւորման մասին:

«Հակառակը՝ քննարկուելու են ցեղասպանութեան հետեւանքներն ու փոխհատուցման ձեւերը», - տեղեկացրեց նա:

Ստեփան Սաֆարեանը, յիշեցնելով, որ Ապրիլին ճանապարհային քարտեզի հրապարակումից յետոյ իրենք առաջինն էին, որ պահանջեցին անմիջապէս հրապարակել բոլոր փաստաթղթերը, նկատեց որ դա չարուեց դիտաւորեալ, քանի որ դա չէր բխում թուրքիայի եւ Հայաստանի շահերից: «Պէտք չէ ամբողջ ազգին դնել փակուղի եւ 6 շաբաթում կեղծ քննարկումներ անել եւ պարտադրել հասարակութեանը այդ տեսակէտները», - ասաց նա:

ԶԱՐՈՒՅԻ ՓՈՍՏԱՆՁԵԱՆ. ՀՅԴ-Ի ՄԱՍԻՆ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՐԾԻՔՍ ՉԵՄ ՓՈՒՅԵԼ

«ԹԵՐԹ»: «Ժառանգութիւնը» ՀԱԿ-ի հետ չի միացել եւ Դաշնակցութեան հետ էլ չի պատրաստում միանալ, որովհետեւ ինքնուրոյն քաղաքական ուժ է: Այդ մասին լրագրողների հետ հանդիպմանը յայտարարել է «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը:



«Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեան

Նշելով, որ ինքն, այնուամենայնիւ, ողջունում է ՀՅԴ-ի հետ միանալու հանդէս գալու «Ժառանգութեան» որոշումը, ինչը կ'օգնի մարդկանց իրազեկելու հայ-թուրքական արձանագրութիւնների հետեւանքների մասին, Ազգային ժողովի պատգամաւորը յաւելեց սակայն, որ դաշնակցականների մասին ունեցած իր կարծիքը, միեւնոյնն է, չի փոխուել եւ ինքն առաջուկ նման շարունակում է հաւատարիմ մնալ օրեր առաջ ունեցած բանավէճի ժամանակ հնչեցրած իր կարծիքին:

Զարուհի Փոստանջեանն՝ անդրադառնալով հայ-թուրքական Արձանագրութիւնների վաւերացման անթույլատրելիութեան ասաց. - «Սերներ կայիս իշխանութիւններն ունեն լուրջ ինդիք՝ կապուած ներքին ժողովրդավարութեան հետ: Նրանք լուրջ ինդիք ունեն, որովհետեւ նրանք չեն ընտրուել բնականոն ընտրութիւնների միջոցով, նրանք ընտրուած են կեղծիքների միջոցով, բացի այդ՝ ընտրուած են նաեւ այնպիսի ընտրական գործընթացից

յետոյ, որի ողբերգական բեռը այս իշխանութիւնների վրայ է՝ անկախ նրանից թէ այդ պահին գործող նախագահն ո՞վ էր: Քանի դեռ այս պահին չկայ բացայտուած որեւէ իրադրութիւն Մարտի 1-ի դէպքերով, այս պահին նրանք կրում են այդ խաղաղ ցուցարանների սպանութիւնների պատասխանատուութիւնը: Եւ այս պահին այս իշխանութիւնները՝ նախագահի գլխաւորութեամբ, խոցելի են»:

Ըստ նրա՝ այդ Արձանագրութիւնները ստորագրող անձը «չի կարող ընդունուել որպէս ՀՀ նախագահ», այլ կը լինի որպէս մասնաւոր անձ, «որը գնալու է ինչ-որ բան ստորագրելու»:

ՕՊԱՍԱ Կ'ԱԶԱԿՑԻ

Շարունակուած էջ 1-էն
Լորու թիւնները:

Հայաստանի նախագահը ընդգծած է, որ սփիւռքահայու թեան մտահոգութիւնները եւ մտավախութիւնները գործընթացի վերաբերեալ բնական են՝ հաշուի առնելով այն փաստը, որ հայ ժողովուրդը Օսմանեան թուրքիոյ կողմէ ենթարկուած է Յեղասպան-

նութեան, որու մասին Պարաք Օպամա բազմիցս խօսած է իր ելոյթներու ընթացքին:

Սպիտակ Տան Պատմական հաղորդագրութեան համաձայն, Ամերիկայի նախագահը հեռաձայնած է՝ խրախուսելու համար Սերժ Սարգսեանի իրգախի դեկավարումը եւ քաջալերելու գինք՝ շարունակել յառաջընթացը թուրքիոյ հետ յարաբերութիւններու բարելաւման գործով:

ԳԱԼՈՒՄՏԻ ՏԵՐՆ ՈՒ ԵՐԱՇԽԱՒՈՐԸ

Շարունակուած էջ 2-էն

թիւնը: Բա ֆրանսիացի ոստիկաններին կարելի է վստահել: Ախր չէ որ ամէն մի ոստիկան կարող է պոտենցիալ մասոն լինել: Բա եթէ յանկարծ ու նրանք իրենց գործը չանէին այնպէս, ինչպէս կ'անեն ասենք հայաստանցի ոստիկանը կամ թէկուզ Գալուստ Սահակեանն ինքը:

Սա իսկապէս լուրջ վրիպում է եւ թերեւս իսկական առիթ է, որպէսզի ասենք Արթուր Բաղդասարեանը, որին էլ ժամանակին Գալուստ Սահակեանը քիչ չէր կծում, Սահակեանի թերացման հարցը բարձրացնի անվտանգութեան խորհրդում եւ քննարկուի, թէ ինչու երբ Սերժ Սարգսեանի դէմ տականքները Փարիզում ցույց էին անում, Գալուստ Սահակեանը գիտեր, որ նրանք տականք են, բայց չանգիտու նստել էր Երեւանում: Թէեւ ով գիտէ, որ Ներսիստ էր նստել: Գուցէ Սահակեանը լաւ էլ անհանգիստ էր, գուցէ նոյնիսկ այդ օրուայ նախորդ գիշերը վատ երազ

էլ տեսած լինէր, ասենք թէ ինչպէս են ազդուները շրջապատել էջֆելեան աշտարակն ու կողկանձում են արեւի վրայ: Ինչ իմանար նա, որ այդ երազը նախանշելու էր Կոմիտասի արձանը, դրա շուրջ հաւաքուած ցուցարար հայերին ու նրանց բացականչութիւնների տարափի տակ ընկած Սերժ Սարգսեանին, որ անկասկած Գալուստ Սահակեանի արեւն է:

Բայց Սերժ Սարգսեանը Գալուստ Սահակեանին հաստատ կը ների: Անվտանգութեան խորհրդում էլ նրա հարցը չեն բարձրացնի, քանի որ Արթուր Բաղդասարեանն էլ կը ների: Սփիւռքահայերն էլ, որոնց նա տականք է անուանել միայն նախագահի դէմ ցույց անելու համար, Գալուստ Սահակեանին հաստատ կը ներեն: Ախր նա մերն է, մեր Գալուստ Սահակեանը, ու ինչ որ ասում է, մեր համար է ասում, մեր լաւ լինելու համար է ասում: Ինքն ինչ անի, որ իր ասածներից ոչ մի բան լաւ չի լինում:

«ԼՐԱԳԻՐ

ԱՂՁԱՅԻՆ

«ԹՈՒՐՔԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԵԼՈՒՑ ԱՌԱՋ՝ ՀԱՅԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԵ՞Լ ԵՍ»

ՄԱԳԻՍԼԱՆՆԱՍԱՐԳՍԵԱՆ

Այդպես էր գրուած ֆարիզում ցուցարարներից մէկի պատասխանը: Իսկ ցուցարարները կանչում էին. «Դաւաճան, ամօթ», «ո՛չ արձանագրութիւններին»: Ցուցարարները նստել էին Կոմիտասի արձանի մօտ, որպիսով Սերժ Սարգսեանին չթոյլատրեն մօտենալ Կոմիտասի արձանին:

Այս բողոքի ակցիայից խիստ անակնկալի եկած՝ Հայաստանի նախագահը փոխել էր ծրագիրը: Կոմիտասի արձանի մօտ ծաղկեպսակը դրուել է առանց նրա մասնակցութեան, իսկ Սերժ Սարգսեանն ընդամենը ակտիվացնելով մօտեցել, երկու ընդհանուր իշխել, ուղղել է ժապավենը եւ արագ հեռացել: Ոստիկանների թիւն աւելի մեծ էր, քան ցուցարարներին: Կան բազմաթիւ ծեծուածներ, ձեռքակալուածներ, անգամ՝ վիրաւորուածներ:

Իսկ ցուցարարները ինչու էին շրջափակել Կոմիտասի արձանը, կարելի է ենթադրել, որ նրանք չէին ցանկանում ազգի «դաւաճանը», եւ այն «ձեռքը», որը պետք է ստորագրի ազգակործան եւ դաւաճանական պայմանագրեր, նոյն ձեռքով ծաղկեպսակ դնի Հայոց Սուրբի՝ Կոմիտասի արձանի մօտ: Այո, կեղտոտ ձեռքերը պետք է հեռու մնան մեր Հայոց սրբութիւններից:

րութիւնները հայ ազգի ամենայն հրաշալի ձեռքբերումներն ու շողութիւններն են:

Սերժ Սարգսեանը Ֆրանսահայ համայնքի իր հաւաքածուներին ասաց. «Լաւ կը լինէր 500 կամ 1000 մարդ ներկայանար Կոմիտասի արձանի մօտ ու լուռ ցոյց անէր, դա աւելի ազդեցիկ կը լինէր, քան այդպէս գոռալն եւ վիրաւորական ձեւով արտայայտուելն». հնարաւոր էր բառացիօրէն նոյնութեամբ շարադրուած չլինի, բայց իմաստը նոյնն է: Փաստօրէն Սերժ Սարգսեանը Սփիւռքին ասում է, թէ նա ինչպէս իր դէմ բողոք ներկայացնի: Ինչ լաւ դեմոկրատ նախագահ է: Բայց Սարգսեանը ստում է, այն էլ բացայայտ, ասելով, թէ ինքը լսել է, որ ինչ-որ մէկը ասում էր «գոռա-գոռա նկարում եմ»: Նախ պետք է ասել, որ պրն. Սարգսեան, դուք այդ աղմուկի մէջ, այդ գոռ-գոռոցի մէջ, երբ 500-ից աւելի մարդ կանչում էր «դաւաճան», ու այդ ժամանակ դուք մի քանի տասնեակ ձեռք թիկնապահներով ու ֆրանսական ոստիկանութեան կողմից շրջափակուած ու համարեա 20-30 մեթր ցուցարարներից հեռու պայմաններում, ինչպէ՞ս կարողացաք այդ «մէկ հոգու» խօսքը այդպէս բառացիօրէն լսել, թէ նա ինչ է ասում: Երկրորդ, պրն. Սարգսեան, ժողովուրդը բարձրաձայն գոռում է՝ դուք չէք ուզում



բողջ Սփիւռքի դեկավարների հետ կամ Սփիւռքահայութեան հետ: Դրանց կարծիքը բոլորովին էլ Սփիւռքի կարծիքը չէ: Սփիւռքը իր կարծիքը յայտնեց հենց Փարիզում Կոմիտասի արձանի մօտ, Նիւ Եորքում եւ Լոս Անճելոսում հաւաքուած բողոքի ցոյցերի միջոցով: Նոյնպէս կ'արտայայտուի նաեւ Լիբանանի Հայ Համայնքը: Պրն. Սարգսեան, ամենալաւ քայլը ձեռք կողմից կը լինէր այն, որ դուք հենց Փարիզում այդ արտայայտութիւնները լսելուց յետոյ անմիջապէս ընդհատէիք ձեռք այցելութիւնն ու վերադառնալիք Հայաստան եւ ստորագրէիք ձեռք հրաժարականը: Այդ դէպքում դուք կը դառնալիք ազգի հերոս: Բայց դուք դրա փոխարէն ժողովրդին հասկացնել տուցիք, որ ոչ մի գնով հրաժարուելու մտադրութիւն չունէք: Ու քանի որ դուք Փարիզում գտնուած էիք ձեռք կողմից հաւաքածուների շրջանակում, համարձակօրէն այդ անողնաշարների մօտ յայտարարեցիք. «... եթէ որեւէ մէկն իր գործողութիւններով փորձում է ինձ սպառնալ, ապա նա, հաւանաբար, շատ միամիտ է»:

ոն գոհի հարց քննարկել ու դրա «հետեւանքները» վերացնել: Ինչպէս մարտիմէկեան դէպքերի ժամանակ, նոյնպէս էլ հիմա ոչ թէ մտածում էք ազգի մասին ու նրա լուրջ խնդիրների լուծման մասին, այլ ձեռք եւ ձեռք շուրջ հաւաքուած մի քանի մարդկանց շահերի մասին, որոնք իրենց ամբողջ ունեցուածքը Հայաստանի անկախութիւնից յետոյ ձեռք են բերել բռնութիւնների միջոցով, քանի որ արդար ճանապարհով ոչ ոք 18 տարիների ընթացքում մէկ միլիարդ կապիտալ չէր կարող դիզել: Եւ ելնելով այդ հանգամանքից ու այդ մենտալիտետի հոգեբանութիւնից է, որ դուք Փարիզում յայտարարեցիք. Ձեր սպառնացողները միամիտ են:



Իսկ Նիւ Եորքում ցուցարարների պատասխաններից մէկում գրուած էր «Սարգսեան-Նալբանդեան = Արէտ Հայութեան», «Տուն Գնա», «Ազդ մի դաւաճանի» եւ այլ լողուններ: Սերժ Սարգսեանը, ինչպէս Փարիզում, նոյնպէս էլ Նիւ Եորքում հաւաքել էր միայն իրեն հարազատ կամ մեղմ ընդդիմադիրներին ու համոզում էր նրանց, որ այդ ազգակործան արձանագ-

լսել, իսկ ինչպէս էք լսելու, եթէ նրանք լուռ բողոքեն: Երրորդ, դուք որպէս Հայաստանի նախագահ վիրաւորում էք ամբողջ ազգին, ամբողջ Սփիւռքին ու նրա մտաւոր ունակութիւնն ու կարողութիւնը, յետոյ սպասում էք ձեզ յարգե՞ն, ծափերո՞վ դիմաւորեն: Մի քանի հաւաքածուների հետ ձեռք հանդիպումը դեռ չի նշանակում, որ դուք հանդիպել էք ամ-

նախ, պարոն Սարգսեան, ոչ ոք ձեզի չի սպառնացել: Ամիսներ շարունակ ձեզ ասում են, հրաժարուի՛ր այդ ազգակործան քայլից, դուք չէ լսում: Ձեզ բացատրում են այդ «արձանագրութիւններում» նշուած վտանգաւոր դրոյթների մասին, դուք չէք լսում: Դուք արհամարհում էք բոլորին, բոլոր մտաւորականներին ու բանիմացներին, դուք ձեռք պահուածքով վիրաւորում էք նրանց արժանապատուութիւնը, ասելով թէ նրանք «միամիտ են»:

Ես չեմ կարծում, որ դուք չէք հասկանում ինչ էք անում, կամ ձեռք «ֆուլթալային դիւանագիտութեան» արդիւնքները ինչի են հանգեցնելու, դուք դա լաւ գիտէք, բայց դրա հետեւանքներ չեն, որ ձեզ անհանգստացնում են, այլ այն, որ յանկարծ դուք ձեռք նպատակին չհասնէք, այսինքն մի քանի ընտանիքի բիզնեսը յանկարծ այդ «միամիտները» չխափանեն: Դուք շատ կը ցանկանալիք, որ բոլորը «միամիտ» լինէին ու աչքները փակ հաւատալիք ձեզ, բայց ի դժբախտութիւն ձեզ, դա այդպէս չէ: Ժողովուրդը գիտակցում է, հասկանում է: Դուք կարող էք կազինո-

Շաբ.ը էջ 19


ՏԵՄԷ՝
ԵՐԹ
BANKRUPTCY-Ի
ՕՐԵՆՔՆԵՐԸ
ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ,
ՉԱՆԳԱՅԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.

ՏԵՍԱԿԵՏ

ԵԿԱԲ, ՏԵՍԱՆՔ, ՎԵՐԱՅԱՍՏԱՏԵՑԻՆՔ՝

ԻՆՔՆԱԿՈՉ ԹԱԳԱԴՈՐ ՄԵՐԿ Է

ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Ինչո՞ւ այս ինքնապախարակիչ շրջապատը գործ Սերժ Սարգսեան, մետասաներոգ ժամուն, չամառեցաւ ձեռնարկել՝ Երեւան-Փարիզ-Նիւ Եորք-Լոս Անձելըս-Պէյրուս-Ռոսթով քմայածին չուերթով:

Արդէն նախապէս յայտարարած ըլլալով թէ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու հաստատումը թմբկահարող «Արձանագրութիւնները» որեւէ փոփոխութեան կամ վերատեսուութեան ենթակայ չեն կրնար ըլլալ, ուրեմն ի՞նչ է այս շուրջերկրեայ ուղեւորութեան իմաստն ու յետին նպատակը:

Քաղաքագէտներ, դիւանագէտներ, այլատեսակ դիտորդներ ու վերլուծաբաններ կրնան տարբեր-տարբեր մեկնութիւններով հանդէս գալ՝ գորղեան հանգոյցը քակելու եւ համոզիչ պատասխան մը գտնելու համար: Որքան ալ փորձիչ ըլլան այս կարգի մտային մարզանքները, պիտի նախընտրեմ անոնց կողքէն անցնիլ այստեղ: Ձեռնարկուած շրջապատի բացատրութեան համար բաւարար է, առանց որեւէ մասնապատուկ խորացման իսկ, պարզապէս անցողակի գնահատական մը տալ Սերժ Սարգսեանի անցեալ վերաբերմունքին ու գործելակերպին - մանաւանդ զեղծարարութեամբ ձեռք ձգուած իր նախագահութեան մէկուկէս տարիներուն:

Այսպէս - Մարդու եւ պարզ քաղաքացիին հանդէպ միայն արհամարհանքով ու սինիզմով տոգորուած գիւղապետի մը հետ է որ գործ ունինք ըստ էութեան: Գաւառային ամենէն հասարակ, պարզունակ ու ծայր աստիճան վտանգաւոր աշխարհայեացք մըն է իրը՝ վերիվերոյ հետեւեալ սեւ-ու-ճերմակ կոպիտ յատկորոշիչներով: - Մարդիկ քեզ յօշոտելու ելած գայլեր են երբ կրնան, հլու կամակատար ոչխարներ են երբ դո՛ւն են տիրապետողը: Ահաբեկի գանոնք, ապա կերակրէ կտոր մը հացով - սակայն նոյն ատեն անոնց հասկցուր թէ այդ չոր հացի կտորէն ալ պիտի զրկուին՝ եթէ համարձակին չհետեւիլ հրահանգներու: Անխնայ պատժէ բոլոր անհնազանդները, ծեծէ եւ բանտարկէ քաղաքական հակառակորդները: Եթէ անհրաժեշտ ըլլայ, գաղտագողի սպաննէ անոնցմէ ամենէն աչքառու քանի մը ըմբոստները որպէս դաստիարակիչ օրինակ, ապա անխախտ օրինականութիւնը երե-

ւութեամբ պաշտպանէ: Առանց աչքերդ թարթելու յայտարարէ թէ գոհերէն մէկը չորրորդ յարկէն վար ցատքելով անձնապան եղած է, երկրորդը՝ ոստիկանի մը վրայ կրակած ատեն ձախաւերութեամբ ինքզինք մեղցուցած է, եւ երրորդը՝ ջուրի հետ շփոթելով թոյն խմած է: Պատճառաբանութիւններու շարահիւստութիւնը այդքան ալ կարեւոր է: Սակայն խիստ կարեւոր է որ բոլոր հակառակորդները հասկնան թէ նմանատիպ անձնասպանութեան կամ դժբախտ պատահարի գոհը կրնան դառնալ անաստողները:

Միւս կողմէ, շարունակելով այս «գմայլելի» յատկորոշիչները, քու ճոխ աւարէդ գէթ համեստ բաժին մը հանէ եւ ըստ կարեւորութեան վարձատրէ քեզ շրջապատող բոլոր ստրկամիտները, կամակատարները, անողնաշարները, պնակալէզները - ամէն մէկը իր պաշտօնին համապատասխան չափով՝ ըլլան անոնք նախարար թէ դռնապան, գորավար թէ գորակոչիկ, ազգային ժողովի պատգամաւոր թէ հանրային խորհուրդի փքուն ոչնչութիւն, դատախազ թէ սահմանադրական դատարանի նախագահութեան ծաղրածու: Շուրջը կազմէ քրէական յանցագործներու, սզրուկներու եւ մարդասպաններու անպարտելի բանակ մը որու վարձկաններէն ամէն մէկը ուխտէ ցմահ ծառայել քեզի՝ այն հաստատ համոզմամբ որ պարտազանցութեան պարագային դատուելու է իր ցանկազրուած ոճիրներուն համար: Անգամ մը որ պատկառելի, մնայուն հանգամանք ստանայ քեզի թիկունք կանգնող քրէական աշխարհի խայտաբղէտ բանակը, աջիդ բազմեցուր հայոց եկեղեցիի ամենայն հայրապետը, ձախիդ՝ հայոց փառապանծ բանակի հրամանատարութեան խամաճիկը - ապա հոգեպարար արարողութեամբ բեմ բարձրացիր, լայն բաց նախագահական օրհնեալ բերանդ եւ առանց քաշուելու, առանց խպնելու բարձրաձայն բարբառէ սէր եւ միութիւն, բարութիւն եւ բարի կամեցողութիւն, խաղաղութիւն եւ համերաշխութիւն, բարօրութիւն եւ յառաջդիմութիւն: Իսկ քու իշխանութեանդ ընդդիմացողները անվերապահօրէն ամբաստանէ որպէս առաքեալները ատելութեան ու պառակտումի, չարութեան ու զանգուածային անկարգութեան, եղբայրասպան կոխներու եւ հայրենադաւու թեան, եւայլն ե՛ւայլն:

Կարճ՝ Սերժ Սարգսեանի գլխիվայր շրջուած աշխարհին մէջ թոյլատրելի է ամէն անօրինութիւն, քրէական յանցագործութիւն եւ ոճիր՝ այնքան ատեն որ կրնայ ծածկել զանոնք եւ աշխարհը խաբել թէ չհասկցուած եւ անիրաւուած սուրբ մըն է ինք: Իր ծուռ հայելին կ'արտացոլայ երեւոյթի եւ ճշմարտանմանի խաբեբայութիւնը, ո՛չ թէ իրողութիւնն ու ճշմարիտը իրենց թափանցիկ պարզութեամբ: Բեմականացուած կեղծ խօսքը եւ ո՛չ ճշմարիտ գործը: Այս իսկ պատճառով, ամէն ոճիրէ, յանցագործութեանէ կամ օրինախախտումէ ետք ան լիովին կը բանայ բարութեան, առաքինութեան ու սիրոյ զեղումի ծորակը, քանի կը կարծէ թէ արտասանուած խօսքը մոգական ուժն ունի ծածկելու ժխտական բոլոր եղելութիւնները:

Մոգական այսպիսի ուժը ատեն մը կամայ-ակամայ հանդուրժելէ ետք, Հայաստանի քաղաքացիները ի վերջոյ անդրադարձան եղածին: Անոնք կը մերժեն ընդունիլ իրենց ի վնաս կատարուող սնամէջ լեզուազարութիւնը: Ատենէ մը ի վեր Հայաստանի մէջ բուռն կերպով ծաւալուող նման գործընթացի ակատեսներն ենք հիմա: Իր անգոյ օրինականութեան հաստատումը չգտնելով սեփական ժողովուրդին մօտ, Սերժ Սարգսեանի հայեացքը ուղղուած է Արեւմուտքին, ներառեալ՝ Թուրքիոյ: Անոնց մօտ կը փնտռէ որպէս նախագահ իր օրինականացման ամրագրումը: Այդ նպատակով պատրաստ է անոնց կատարելու շատ աւելի մեծ գիշուներ քան այն որ մերժած է իր սեփական ժողովուրդին: Արեւմուտքը եւ Թուրքիան - իւրաքանչիւրը իր ուրոյն շահերէն թելադրուած - տրամադիր են զինք բաւարարելու: Պայմանաւ, անշուշտ, որ փոխարէնը ան կատարէ իրենց պատուէրը եւ ամենէն առաջ՝ հայութեան համար ինքնասպանութեան համագոր Արձանագրութիւններու համաձայնութիւնը:

Հոս իր լրումին կը յանգի արտաքին քաղաքականութեան մէջ Սերժ Սարգսեանի եւ Եղուարդ Նալբանդեանի անանկութեան եւ անձնատուութեան ազգադաւ ողբերգութիւնը: Կամայական ինչպիսի բացատրութիւններ ու չքմեղանքներ ալ յօրինուին, փաստը կը մնայ նոյնը: - Արձանագրութիւններու ընդգրկած գործարքը, ըստ էութեան, պատմական Հայաստանէն մնացած տասը պոճուրիկ տոկոսը կազմող մեր միևնուճար հայրենիքի վերջնական վաճառքն է անուղղակիորէն Արեւմուտքին եւ ուղղակիորէն Թուրքիոյ: Այս փաթեթային վաճառքը ինքնաբերաբար

իր մէջ կը պարունակէ նաեւ Արցախն ու հայկական հողերու որեւէ պահանջատիրութիւն, ինչպէս նաեւ ցեղասպանութիւնը եւ անոր հետ կապուած բոլոր պահանջները: Այստեղ դեռ չենք խօսիր ազգային արժանապատուութեան, մարդկային իրաւունքներու եւ մէկուկէս միլիոն մեր անմեղ գոհերու միացող, հոգեկէզ չիշատակին մասին: Հայաստանի «անկախ» հանրապետութեան - հարստապետութեան - մէջ տեղ չկայ նման վերացական հասկացութիւններու համար:

Փորձենք կատարել Արձանագրութիւններու մէկ արագ հաշուեկշիռը:

Հայ-թրքական սահմանի բացումով Հայաստան գործնապէս ճանապարհը կը հարթէ Ատլանտեան Ուխտի համազգեստով թուրք գինուորներուն առջեւ: Այսպիսով կ'ամբողջանայ եւ կը համաձուլուի Արեւմուտքի գերիշխանութիւնը ամբողջ Անդրկովկասի մէջ, որու համար ի հարկէ նախապայման է ուսական գորքերու հեռացումը հայ-թրքական սահմանագիծէն: Ասիկա՝ ինչ կը վերաբերի Արեւմուտքի շահերուն:

Նոյն գործընթացին առնթեր, Թուրքիա ցամաքի ճամբով կը միանայ Ատրպէյճանի իր թուրք եղբայրներուն՝ այլեւս իր շնորհքին ենթակայ Հայաստանի վրայով գոր վերջապէս «ազատագրած» է ուս սահմանապահներէն: Դէպի Արեւելք թրքական յառաջխաղացքը յետագային կը հասնի մինչեւ Կեղրտնական Ասիոյ թրքախօս «եղբայրական» երկիրները՝ միաժամանակ սպառնալով Ռուսաստանի, Իրանի եւ Չինաստանի հողերուն: Ասիկա՝ ինչ կը վերաբերի Թուրքիոյ շահերուն:

Հայաստանը չէզոքացնելէ ետք Ատլանտեան Ուխտի պայմանագրերով, Թուրքիա կարճ ժամանակի մէջ կրնայ տնտեսապէս, քաղաքականապէս, մշակութապէս եւ այլ կերպերով հեշտութեամբ «մարսել» Հայաստանը, ափսէի վրայ Ղարաբաղը նուիրել իր ազերի եղբայրներուն, եւ «պատմական հարթութեան վրայ» անիմաստ յուշի վերածել հայոց ցեղասպանութիւնը: Հոս հարց կը ծագի: - Արձանագրութիւններու ստորագրութեան ամբողջ թոհուբոհին մէջ ո՞ւր են թաքնուած հայ ժողովուրդին շահերը, քանի սահմանի բացումէն հասկայն շահողներն են Արեւմուտքը եւ Թուրքիան: Այսպիսի միակողմանի, նուաստացուցիչ պայմաններով, հայկական կողմը, Սերժ Սարգսեանի արտապայտութեամբ իսկ, այդքան «միամիտ չէ» որ նման պայմա-

Շարք էջ 17



Blue Cross of California
Authorized Agent



Blue Shield of California
Authorized Agent

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
BMaronian@AOL.com

FAX **500-9308** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





A.B.A. INSURANCE SERVICES

ԲՆԱՐԿՈՒՄ

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍԵՐՁԵՑՈՒՄ. ՀԵՌԱՆԿԱՐ, ԹԵ՞ ՎՏԱՆԳ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐՑԵՐԸ ՊԱՅԱՆՋՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Երեք մայրաքաղաքներից՝ Երեւանից, Բեռնից ու Անքարայից Օգոստոսի 31-ի գիշերը Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների մասին հրատարակուած արձանագրութիւններն ու դրանց ժամանակացուցը ալեկոծեցին միլիոնաւոր հայերի մտքերն ու հոգիները: Յաջորդ առաւօտն իսկ, Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միութեան (ՀԱՄ) վարչութիւնը որոշեց հաւաքուել ու անմիջապէս քննարկել ճակատագրական կոչուելու հանգամանքին յաւակնող փաստաթղթերն ու դրանցից բխող մտահոգիչ հեռանկարները: Սեպտեմբերի 2-ին որոշում կայացուեց՝ առանց ժամ իսկ կորցնելու կազմակերպել համայնքային լայն քննարկում, հրաւիրել նաեւ Գերմանիայում Հայաստանի Հանրապետութեան ղեկավարութեան ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մշտական ներկայացուցչութեան ղեկավարներին: Գերմանիա աշխատանքի ժամանած ՀՀ նորանշանակ ղեկավար Արմէն Մարտիրոսեանի գրասեղանին առաջին աշխատանքային օրն իսկ դրուեց ծրագրին մասնակցելու հրաւերը: Ի պատիւ նոր ղեկավարի, պէտք է ասենք, որ արժեւորելով համայնքի ու ղեկավարութեան միջեւ միանգամից աշխատանքային-գործնական յարաբերութիւններ հաստատելու երկկողմանի ձգտումը, առաջնորդուելով Հայ-թուրքական յարաբերութիւնների մասին ՀՀ իշխանութիւնների դիրքորոշումն անձամբ ներկայացնելու, առհասարակ հարցի կարեւորութեան գիտակցութեամբ, ՀՀ ղեկավարը յաջորդ օրը տուեց ծրագրին մասնակցելու իր ու ղեկավարութեան երկրորդ քարտուղար Համբարձում Մինասեանի մասնակցութեան համաձայնութիւնը: Հարցի քննարկման հրաւերին անմիջապէս դրական պատասխան տուեց նաեւ Գերմանիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Գայանէ Ափրինեանը: Երեք պետական այրերի կողքին քննարկմանը մասնակցեցին երեք սփիւռքեան ներկայացուցիչներ - Գերմանահայ կենտրոնական խորհրդի նախագահ, դր. Շաւարշ Յովսափեանը, Եւրոպայի Հայ դատի բրիւսելեան գրասենակի Գերմանիայի ներկայացուցիչ Անդրանիկ Ազնաւուրը եւ գերմանահայ համայնքի փորձառու գործիչ, դր. Բաֆֆի Պետրիկեանը: Քննարկումը վարում էր ՀԱՄ-ի նախագահ Ազատ Օրդուխանեանը: Հապճեպ կազմակերպուած բաւականին ներկայացուցչական ծրագրին ներկայ էին 90 մասնակիցներ, որոնց մէջ էին Գերմանահայոց կենտրոնական խորհրդի վարչականները, Ափրինի հայ համայնքի նախագահը, Սիլվա Կապուտիկեանի անուան Գերմանահայ կանանց միութեան նախագահուհին, Նոր Սերունդ Երիտասարդական կազմակերպութեան ղեկավարները, Գերմանահայ Բժիշկների ու բուժաշխատողների միութեան, Քոլնի եկեղեցական միութեան վարչութեան ներկայացուցիչները, կենտրոնական Գերմանիայի հայկական համայնքների հոգեւոր հովիւրը, տարբեր քաղաքական հայեաքների յարող ակտիւ համայնքայիններ, ՀԱՄ-ի բազմաթիւ անդամներ, ուսանողներ:

Առաջին բանախօս Անդրանիկ Ազնաւուրը քննարկումը սկսեց



հետեւեալ արտայայտութեամբ. «Մենք դէմ չենք Հայաստանի եւ Թուրքիայի միջ-դիւանագիտական յարաբերութիւնների հաստատմանը, սակայն, ինչպէս միշտ շեշտել ենք՝ առանց նախապայմանի: Մենք կարծում ենք, որ այս հարցում ՀՀ իշխանութիւնները մեծ սխալ են գործում: Այս փաստաթղթերը ոչ թէ նախապայմաններ են պարունակում, այլ շատ աւելին: Ստորագրելով այս փաստաթղթերը նրանք մեզ եւ մեր սերունդներին դնում են չափազանց մեծ դժուարութիւնների առջեւ, անչափելի մեծ վնաս հասցնում մեր ժողովրդի իրաւունքներին: Կատարուող սխալի շտկումը ապագայում աներեւակայելիօրէն դժուար է լինելու: Նման համազգային տարողութիւն ունեցող բարդ հարցերի վճռահատումը այսպէս գաղտնի բանակցութիւնների ճանապարհով կատարելն ու հայ ժողովրդին մասնակից չղարձակելը գտնում ենք խիստ քննադատելի: Փաստօրէն Հայաստանի իշխանութիւնները մեր առջեւ դրել են պատրաստի ապուր: Կամ այդ ենք ասելու կամ ոչ: Մենք այս պարագայում միայն ոչ կարող ենք ասել»:

Բաֆֆի Պետրիկեանի կարծիքով «Թուրքերը կրկին կեղծ են մեզ հետ: Ես որպէս ցեղասպանութիւնից մազապուրծ եղած ընտանիքի գաւակ ոչ մի հաւատ չունեմ մարդասպան պետութեան հանդէպ, համոզուած չեմ, որ Թուրքերը Հայաստանի եւ հայ ժողովրդի հանդէպ որեւէ բարի բան կը ցանկանան անել»:

Գերմանահայոց կենտրոնական խորհրդի նախագահ, դր. Շաւարշ Յովսափեանը ներկայացրեց համայնքի ղեկավար կազմակերպութեան տեսակէտը. «Մեր գաղութի տեսակէտը այս հարցում մենք արդէն մեր մամուլը հարողակցութեան միջոցով յայտնել ենք: Յարգելի պարոն ղեկավար, չգիտեմ, այն ձեզ համար թարգմանել են, թէ ոչ, ուստի եւ կրկնում եմ. մենք, սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւնների նման, արձանագրութիւնների այս ձեւին խիստ դէմ ենք, այն համարում ենք չափազանց վնասակար ու վտանգաւոր մեր ժողովրդի համար, ՀՀ իշխանութիւններից պահանջում ենք այս տեքստը չստորագրել, այն վտանգում է մեր իրաւունքները մեր հայրենիքի նկատմամբ: ՀՀ կառավարութիւնից մենք մինչեւ հիմա ոչ մի մանրամասն ու ամբողջական տեղեկատուութիւն չենք ստացել»:

Ըստ ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Գայանէ Ափրինեանի «նա-

խաստորագրուած փաստաթղթերը նոյնիսկ կարելի է համարել հայ դիւանագիտութեան յաջողութիւն, դրանք մեր ու օտարազգի պատմաբաններին հարաւորութիւն կը տան Օսմանեան կայսրութեան արիւններից հանել կարեւոր փաստաթղթեր ու պաշտպանել մեր շահերը»:

ՀԱՄ-նախագահ Ազատ Օրդուխանեանը ներկայացրեց կազմակերպութեան դիրքորոշումը արձանագրութիւնների վերաբերեալ. «Համազգային հիմնախնդիրները, ինչպիսիք են Հայոց ցեղասպանութեան, Արեւմտեան Հայաստանին վերաբերուող ամէն մի հարց, հայոց գրական լեզուի ուղղագրութեան եւ այլ համազգային ընդգրկում ունեցող հիմնահարցեր պէտք է լուծուեն համազգային ուժերով: Այսինքն՝ այսօր աշխարհում ապրում է մօտ 12 միլիոն հայ: ՀՀ-ն իր 3 մլն. բնակչութեամբ սոյն հարցերի լուծման գործում ունի միայն 25 տոկոս ձայնի իրաւունք, 75 տոկոսը պատկանում է սփիւռ-

60 հազարանոց գերմանահայերի կամ 450 հազարանոց ֆրանսահայերի փոխարէն: Հայ-թուրքական յարաբերութիւնները ոչ այսօր եւ ոչ էլ ապագայում չեն կարող լինել Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններ, այլ հայ եւ թուրք ժողովուրդների յարաբերութիւններ են: Այսօր հայերի ուժը գտնուում է ոչ միայն ՀՀ-ի տակ, այլ նաեւ նրա շուրջ: Ցեղասպանութեան հարցը մնում է ուժեղ գենք ՀՀ-ն ու սփիւռքը պաշտպանելու համար, այն չենք կարող կամաւոր յանձնել: Հերթական անգամ չենք ցանկանում ազգովի Գրիգոր Զոհրապ դառնալ, որը քայլում էր մահուան ճանապարհով, բայց դեռ հաւատում էր Թալաթ փաշայի բարեկամական խօսքերին, որը դահիճն արտայայտել էր իր մահուան հրամանը տալուց մի քանի ժամ առաջ: Մենք գենոցիդի հետ ապրել ենք նաեւ պատրիոցիդ, այսինքն՝ սպանուել է ոչ միայն մեր ժողովրդի մեծ մասը, այլ մեզանից բունի խլուել մեր սուրբ հայրենիքը: Արեւմտեան Հայաստանը, ի տարբերութիւն մեր անմեղ նահատակների, անդառնալի կորուստ չէ մեզ համար: Ի՞նչ է անում դահիճն այսօր՝ փոխհատուցելու համար իր գոհի ժառանգներին: Որպէս ներողութիւն, որպէս բարի կամքի դրսեւորման սկիզբ, նա գոնէ պէտք է նպաստի ՀՀ տնտեսութեան զարգացմանը, վերականգնի Արեւմտյան Հայաստանի պատմամշակութային ժառանգութեան մնացորդները, սփիւռքի հետ բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու փորձեր անի, մտածի իրական փոխհատուցումների մասին: Աշխարհն ունի

Շար.ը էջ 17


 ԹԵՔԵՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԵԱՆ
 ՀԱՅԿԱՇԻՆ ՈՒՋՈՒՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԵՔԵՆԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԵԱՆ
 35-ԻՉ ՀԱՅԿԱՇԻՆ ՈՒՋՈՒՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ - 2010

Թէքեան Մշակութային Միութիւնը կը յայտարարէ երկու տարին սեզան մը կատարուող Հ. ՈՒՋՈՒՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ - 2010-ի պայմանները: Կարելի է 35-րդ մրցանքին ներկայացնել.

Ա. - Գրական գեղարտեստական ստեղծագործութիւններ.
 Բ. - Հայագիտական եւ պատմագիտական աշխատութիւններ:
 Յիշեալ զնոյնը մրցանակի արժանացող հեղինակները կը ստանան համապատասխան վկայագիր եւ դրամական նուէր:

1. - Կարելի է մրցութիւն ներկայացնել 2008-2010 բուսականներուն հայերէն լեզուով կատարուած գործեր:
2. - Մրցութիւն իրատեք մտին գործեր ներկայացնելու Հայաստանէ եւ Սփիւռքի տարբեր գաղութներէ, անհատ գրողներ (արձակագիր, բանաստեղծ, քառերյակագիր), ուսումնասիրողներ, սրտածախսներ կամ բանաստեղծներ:
3. - Մրցութիւն չեն կրնար մասնակցիլ մրցանակի դատուական Կազմի անդամները:
4. - Մրցութի ներկայացուող գործերէն եզրապահ օրինակ որիկ հետեւեալ հասցէներէն ձեւում միայն.

Taline Avakian-Ouzounian TCA Haygashen Ouzounian Literary Award
 19 Route de la Capite, 50 Khanjian
 1223 Cologny, Switzerland Erevan, Republic of Armenia

Գործերը ներկայացնելու ժամկետն է 2010 Յուլիս 15:
 Արդիւնները պիտի յայտարարուին 2010-ի Հոկտեմբերին:

Թ.Մ.Մ. Հ. ՈւՋՈՒՆԵԱՆ Գրական Մրցանակի Յանձնաժողով

ՊԱՐԶԻՐ ՔՈ ՁԵՌՔԸ, ԲԱՐԵԿԱՍ...

ՍՖ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՆՈՐ ՀՈԳԵԻՈՐ ՀՈԿԻԻ
ՏԵՐ ՍԱՐԳԻՍ ԱԻԱԳ ՔԱՅԱՆԱՅ ՊԵԹՈՅԵԱՆ

Փաստորինայի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ծխական խորհուրդը ուրախությամբ կը յայտարարէ որ նոր նշանակուած հոգևոր հովիւ Արժ. Տէր Սարգիս Աւագ Քահանայ Փետրեանը իր պաշտօնը պիտի ստանձնէ յառաջիկայ Կիրակի, 11 Հոկտեմբեր, 2009-ին:



ժառանգաւորաց վարժարանն ու Սբ. Վլատիմիր Ուղղափառ ժառանգաւորաց վարժարանը՝ զորս կ'աւարտէ, ստանալով Մագիստրոս Արուեստից Տիտղոս՝ Աստուածաբանութեան ճիւղին մէջ:

Այդ օր՝ Տէր Սարգիս պիտի մատուցանէ սուրբ եւ անմահ պատարագ: Իսկ օրուայ հոգեպարար արարողութեանց պիտի նախագահէ թեմիս բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանը: Պատարագէն ետք տեղի պիտի ունենայ սիրոյ սեղան՝ եկեղեցուց Եկաւեան սրահին մէջ:

Տէր Սարգիս մեզի կու գայ Սան Ֆրանսիսքոյէն՝ ուր վերջին տարւոյն տարիներու ընթացքին, ան հոգևոր հովիւն էր տեղուց Սբ. Յովհաննէս եկեղեցուց:

Տէր Սարգիս՝ աւագանի անուանով Տէրոն, գաւակն է հանգուցեալ Տքթ. Արթւրը եւ Արփի Փետրեաններու: Ան իր նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Նորթրի-ճի հանրային վարժարաններուն մէջ: Յաճախած է Նորթհրիճի համալսարանը եւ 1982-ին աւարտելով անոր շրջանը ստացած է Պսակաւոր Արուեստից Տիտղոս՝ փիլիսոփայութեան եւ մարդասիրութեան գոյգ ճիւղերուն մէջ:

Ծննդեան 30րդ տարեդարձին՝ ան կոչուած կ'ստանայ ծառայելու որպէս քահանայ: Վաչէ Արք. Յովսէփեան զինք կը դրկէ Սբ. էջմիածին որպէսզի սորվի ծխակատարութիւն եւ հայերէն լեզու: 1991-ին՝ Տէր Սարգիս կ'ընդունուի Սբ. Ներսէս

1997-կ'ամուսնանայ թալին Մէրմէրեանի հետ, իսկ յաջորդ տարին քահանայ կ'օծուի՝ ձեռամբ Վաչէ Արք. Յովսէփեանի: 2005 թուականին՝ եկեղեցական բեղուն ծառայութեանց համար Տէր Սարգիս Ամենայն Կայտց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի սրբատառ կոնդակով արտօնութիւն կ'ստանայ հազնելու ծաղկեայ փիլոն, իսկ 2007-ին՝ Վեհափառ Հայրապետը իրեն կը շնորհէ Աւագ Քահանայի տիտղոսը:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը որ ներկայ գտնուին Տէր Սարգիս Աւագ Քահանայ Փետրեանի անդրանիկ պատարագին եւ մեզի հետ բաժնեն մեր ուրախութիւնը ու մաղթեն իրեն յաջողութիւն եւ ծրագիրներու իրականացում:

Հ.Բ.Ը.Մ. ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
«ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ»՝ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԻ
ՆԵՐՇՆՆՈՒՄՈՎ

«Ազգանուիրում» ծրագրի մասնակից շուրջ 25 պատանի-պարմանուհիներ ներկայ գտնուցան իրենց նախաՎերջին հանդիպման, Սեպտեմբեր 12ին, Փաստորինայի Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան համալիրէն ներս:

Առաջին հերթին մասնակցութեան շրջանը աւարտող պատանի-պարմանուհիները իրենց հանդիսութեան օրուան ցուցադրուելիք տեսանկյունի նկարահանումը ամբողջացուցին: Ապա, անուր Երկու մեթոդներու՝ Քէթրին Պոստոյեանի եւ Արդին Մնայեանի ղեկավարութեամբ, հայկական շուրջպար մը սորվեցան, տաքուկ ու խանդավառ մթնոլորտ մը ստեղծելով, Հ.Բ.Ը.Մ.ի Փաստորինայի պարտէզէն ներս՝ ուր Շաբաթ օրով այս խումբ մը հայ պատանիներ-պարմանուհիները հաւաքուած էին, հայկական հարուստ մշակոյթին տարբեր ոլորտներուն ծանօթանալու ու միատեղ հաճելի ժամանցի պահեր ապրելու:

Դաստիարակչական բաժինով, պրն. Յարութ Տէր Դաւիթեանը ներկայացուց մեր դիւցազուններէն Սասունցի Դաւիթը: Հակիրճ պատմութիւնը պատմելէ ետք, դասախօսը կեդրոնացաւ Սասունցի Դաւիթին կերպարին ընդմէջէն հայ ժողովուրդի նկարագրային գիծերը բնորոշող յատկութիւններուն վրայ: Ազատասունչութեան, խիզարութեան, պարզանքի, կնամեծարութեան եւ ինքնապաշտպանութեան մասին խօսելով, ան շեշտեց կարեւորութիւնը

նմանօրինակ յատկութիւններու տէր անձեր ըլլալուն, որ մեր նախահայրերուն կողմէ մեզի վատհուած ժառանգն է: Ապա, պրն. Յարութ Տէր Դաւիթեանը փոխանցեց մասնակիցներուն, որ Սասունցի Դաւիթի շքանշանով պիտի պարգևատարուին, իբրեւ խորհրդանշան ազգին ամբողջովին նուիրուելու վսեմ գաղափարին:

Հաւաքի աւարտին մասնակիցները ճաշակեցին յանձնախումբի կողմէ տրամադրուած ճաշը:

«Ազգանուիրում»-ի վերջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 10ին, Հ.Բ.Ը.Մ. Փաստորինայի կեդրոնին մէջ: Հիւր պատգամախօսներէն են Տէր Շնորհք Ա. Քահանայ Տեմիրճեան եւ արուեստագիտուհի Սիրուն Երէջեան:

Հանրութիւնը սիրով հրաւիրուած է Հ.Բ.Ը.Մ. Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկի կազմակերպած յատուկ հանդիսութեան՝ երբ տեղի պիտի ունենան զոյգ հանդիսաւոր արարողութիւններ, առաջինը՝ պարգևատրում 2009ի մասնակիցներուն իսկ երկրորդը՝ ներկայացում 2010ի նոր թեկնածուներուն: Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 18, 2009, ժամը 3ին, Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին մէջ, Պրոպէնք:

Մեր անցեալի կեանքում շատ ենք տուժել եւ դեռ տուժում ենք, քանի որ անմիաբան ենք եղել, իրար նկատմամբ գոռոզ եւ անգիշող, իսկ օտարին հլու հպատակ: Հայրենիք պահելը քաջութիւն, հաւատարմութիւն, նուիրվածութիւն եւ հայրենասիրութիւն է պահանջում, որ ցաւօք սրտի էս խօսքերը ինչ կազդեն ապագային մարդու վրայ: Հիմա էլ չենք իմանում, ոնց պիտի ապրենք եւ ոնց պիտի պաշտպանենք մեր երկիրն ու մեր ժողովուրդը: Հայրենիքը լքում ենք, աղանդաւորների շարքերն ենք մտնում՝ նրանց որոգայթում շեղուած մեր եկեղեցուց եւ ազգային հասկացողութիւնից ու այսպէս սխալներ շարունակ:

Արի ու տես այդ աղանդաւորական կազմակերպութիւններին, թէ ինչպէս նրանց ազատ գործունէութիւն է թոյլատրուել, նրանք իբր թէ քրիստոնէութիւն են քարոզում, էն էլ ում՝ քրիստոնէայ երկրին: Մի տեսակէտից սովետա-

Շարք էջ 15

The City of Glendale presents
**Unity Fest
Glendale**

Arts & Crafts • International Food Court • Children's Area

FARMER'S MARKET
featuring...

- Certified California Farmers
- Organic Produce
- Fresh Baked Goods
- Quality Fresh Flowers
- Nuts, Berries & Sprouts
- Fresh Seafood
- Artisan Cheeses

Sunday, October 11, 2009
Noon - 6:00 p.m.
On Brand Blvd. between California & Lexington

LIVE ENTERTAINMENT

- Korean Drums
- Maggie Tune Children's Songs
- Holy Family High School Performing Arts
- Glendale High School Chamber Choir
- Immortals Chinese Lion Dance
- Scandia Dance
- Rosarito Folklorico Dance
- Hamazkayin Niarl Group
- Armenian Dance
- Korean Dance
- Celtic Band
- Hawaiian Dance
- Hoover High Jazz Band

Free Admission
Free parking at the Orange Street Parking Garage, 222 N. Orange St.

This is a smoke-free event.

Information hotline: (818) 548-6464 or visit www.ci.glendale.ca.us

Request for reasonable accommodations must be received no later than one week prior to the event.

Sponsored by

ԳՐԱԿԱՆ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՍԸ ՆՈՐԱՅԱՅՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Դանիել Վարուժանի բանաստեղծությունները 1955ի հրատարակության մէջ, գոր կազմած ու ծանօթագրած էր բանաստեղծ Սողոմոն Տարօնցին, ընդգրկուած է «Զօն» վերնագրուած հետեւեալ քերթուածը (էջ 370).-

Օր. Վ.Պ.-ին
Վարդ ֆաղեցիք,- սիրտ թող

ըլլայ
Հաւատարիմու անձնուէր.
Կեանքիդ դժուար նամբուն

վրայ
Քեզի գոհէ իր արիւններ:

Աստղ ուզեցիր,- արեւ ըլլայ
Եւ պարուրէ քեզ շողերով.
Մագերուդ վրայ ոսկի տեղայ
Ու սրտիդ մէջ խիւղ ու կորով:
Պահապան մը ուզեցիր,- ան
Գարնան պայծառ լուսնակն

ըլլայ,
Եւ հրեշտակին պէս սիրական
Հըսկէ անձնու բարձիկ վրայ:
Զա՛յն մ'ուզեցիր,- երգըս

ըլլայ.
Որ աստուծմէ ինձ կը հոսի.
Ան արեւ է, սի՞րտ լուսնակայ,
Զի ան երա՛զ կու տայ քեզի:
(12 փետրուար 1914, Պերա)

Այս բանաստեղծութիւնը տեղադրուած էր, ինչ-ինչ գեղարուեստական նկատառումներով, «Հեթանոս Երգեր» բաժնի «Գողգոթայի ծաղիկներ» ենթաբաժնին մէջ: Անոր առիթով, Տարօնցի կատարած է հետեւեալ ծանօթագրութիւնը. «Առաջին անգամ տպուել է 1925 թ. Ամերիկահայ Հանրագիտակում» (էջ 424):

Կը թուի, որ «Զօն»ը նախընթաց երեսնամեակին արտատպուած էր Վարուժանի այլ ժողովածուներու մէջ, ինչ որ չենք կրցած ճշդել: Արդարեւ, Վազգէն Գաբրիէլեան նոյնութեամբ ընդգրկած էր գայն, Երկերեւ (1984) «Խառն բանաստեղծութիւններ» բաժնին մէջ (էջ 444), հետեւեալ ծանօթագրութեամբ.- «Լոյս է տեսել «Ամերիկահայ Հանրագիտակում» (1925 թ.): Մտել է երեւանեան ժողովածուների մէջ (էջ 544): Նոյն թուականին լոյս տեսած «Դանիել Վարուժանի կեանքի եւ ստեղծագործութեան» տարեգրութիւններին մէջ, Ալբերտ Շարուրեան կը յիշէր այդ բանաստեղծութիւնը յղելով Տարօնցիի 1955ի հրատարակութեան (էջ 223): Միւս կողմէ, Անթիլիասի 1986ի «Բանաստեղծական երկերուն մէջ (Պօղոս Մնայեան), բանաստեղծութիւնը նոյնպէս գետեղուած է «Խառն բանաստեղծութիւններ» բաժնին մէջ (էջ 472), թէեւ բնագրային մէկ շեղումով (չորրորդ տողը դարձած է «Քեզ գոհ է իր արիւններ») եւ մէկ վրիպակով (տասներորդ տողի «լուսնակն» բառը դարձած է «լուսնակն»): 1987ի երկերու լիակատար ժողովածուին Բ. Տատրին մէջ (Զաննի Միրզաբէկեան եւ Իրիտա Վարժապետեան), «Զօն»ը վերատպուած է կէտադրական մէկ փոփոխութեամբ (իւրաքանչիւր տան առաջին տողին ստորակէտ-գծիկը դարձած է պարզ ստորակէտ) եւ մէկ վրիպակով կամ սրբագրութեամբ (վերջին տողին «երա՛զ»ը դարձած է «երա՛զ») (էջ 237): Այս հրատարակութեան ծանօթագրութիւնը (Զ. Միրզաբէկեան) ուշագրաւ ճշդում մը կատարած է: Հոն կը կարդանք.- «Ինքնագիրը յայտնի չէ: Տպագրուել է» Դ. Վարուժանի, Բանաստեղ-



ծութիւններ, Երեւան, 1955, էջ 370) հետեւեալ ծանօթագրութեամբ. «Առաջին անգամ տպագրուել է «Ամերիկահայ Հանրագիտակ», 1925»: Յիշեալ պարբերականում, սակայն, այդպիսի բանաստեղծութիւն չի յայտնաբերուել: Տպագրուել է 1955 թ. ժողովածուից» (էջ 437-438):

Մանօթագրողն ալ աւելցուցած է, թէ չէ կրցած ճշդել օր. Վ.Պ.ի ինքնութիւնը: Իրօք, ինչպէս ստուգեցինք, Յակոբ Խաչմանեանի «Ամերիկահայ Հանրագիտակ» տարեգիրքին (երկու թիւ, 1925 եւ 1926) 1925ի հատորին մէջ (Պոսթըն, տպարան «Հայրենիք») Վարուժանէն որեւէ անտիպ չկայ: Ինչո՞ւ Ս. Տարօնցին նման առեղծուածային ու, ըստ ամենայնի, անճիշդ տեղեկութիւն մը տուած է: Այսօր կարելի չէ գոհացուցիչ պատասխան մը տալ: Պէտք է սպասել, որ դիպուածով իր օգտագործած տպագիր աղբիւրը երեւան ելլէ:

Մինչ այդ, դիպուածի այլ տնօրինութեամբ, վերջերս մեզի յայտնի դարձաւ «Զօն» ուրիշ հրատարակութիւն մը, որ «Վարուժանի մէկ անտիպ ոտանաւորը» խմբագրական վերտառութեամբ ու «... ին» խորագրով լոյս տեսած է Պոսթընի «Հայրենիք» ամսագրի Սեպտեմբեր 1935ի թիւին մէջ (էջ 13): Կը վերարտադրենք գայն ստորեւ՝ նոյնութեամբ.-

Վա՛րդ ֆաղեցիք,- սիրտ թող
ըլլայ,
Հաւատարիմու անձնուէր.
Կեանքիդ դժուար նամբուն

վրայ
Քեզի գոհէ իր արիւններ:

Ա՛ստղ ուզեցիր,- արեւ ըլլայ
Եւ պարուրէ քեզ շողերով.
Մագերուդ վրայ ոսկի տեղայ
Ու սրտիդ մէջ խիւղ ու կորով:
Պահապա՞ն մը ուզեցիր,- ան
Գարնան պայծառ լուսնակն

ըլլայ.
Եւ հրեշտակի պէս սիրական
Հըսկէ անձնու բարձիկ վրայ:
Զա՛յն մ'ուզեցիր,- երգըս

ըլլայ.
Որ Աստուծմէ ինձ կը հոսի.
Ան արեւ է, սի՞րտ, լուսնակայ,
Զի երա՛զ կու տայ քեզի:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ, 12 փետրուար 1914, Բերա «Հայրենիք»ի հրատարակութեան յաւելեալ շահեկանութիւնը կը գտնուի քերթուածին կցուած ծանօթագրութեան մէջ, որ քիչ մը լոյս կը սփռէ ցարդ անյայտ օր. Վ.Պ.ի ինքնութեան վրայ.- «ՄԱՆՕԹ.- Քաղուած է օր. Վերժին Պոյաճեանի ալպոմէն,

աղջիկը սեբաստացի պ. Գ. Պոյաճեանի, որ սերտ կապ մը ունեցած է Վարուժանի հետ»: Ծանօթագրութիւնը ոչինչ կ'աւելցնէ քերթուածին փոխանցումի ճանապարհին մասին: Ո՞ւր էին ալպոմն ու իր տէրը: Ո՞վ կատարած է արտագրումը: Նկատի ունենալով, որ նահատակ գրագէտին այրին՝ Արաքսի Վարուժան, այդ տարիներուն Նիւ Եորք կը բնակէր, ուրկէ բանաստեղծութիւններով կ'աշխատակցէր «Հայրենիք» ամսագրին, կարելի է վարկածային կերպով ենթադրել իր միջամտութիւնը այս գործին մէջ: Դժբախտաբար, ո՞չ Վ. Պոյաճեանի եւ ոչ ալ, յատկապէս, իր հօր մասին յաւելեալ տեղեկութիւններ կրցած ենք ձեռք բերել: Ալպոմին յետագայ ճակատագիրն ալ անծանօթ է: Եթէ կանխաւ կարելի էր ենթադրել, որ Տարօնցիի աղբիւրը «Հայրենիք»ն էր ու 1955ի պայմաններուն մէջ ան նախընտրած էր ինքզինքը «ապահովագրել» այդ աղբիւրը քողարկելով քաղաքականապէս նուազ ինդրայարոյց անունի մը տակ (թէեւ «Ամերիկահայ Հանրագիտակ»ը հրատարակուած էր դաշնակցական շարքայինի մը կողմէ), բնագրային բաղդատութիւնը ակնյայտ կը դարձնէ, որ ան օգտուած է ուրիշ աղբիւրէ մը: Բացառուած է, որ ան տեսած ըլլար «Հայրենիք»ը եւ միջամտած.

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ՝ ՄՀԱԿՈՅԹԻ ՏՕՆ

Շարունակուած էջ 14-էն

կան կարգերը բարիք եղան մեր ժողովրդի համար, կրօնի Ֆանտազիան մոռացնել տուեց հայրենիքում եւ դա պատճառ դարձաւ Արցախի պատերազմում մերոնք անվեհեր ճակատեն թշնամու դէմ՝ բռունցքի դէմ բռունցքի քաղաքականութիւնը բանեցնեն, բռնութեան դէմ՝ բռնութիւն, ուժի դէմ՝ ուժ եւ տեսանք թէ ինչպէս մի բռու ժողովուրդ թրքական հակայածաւալ զէնքի ու բանակների դէմ դիմադրեց եւ յաղթութիւն տարաւ, բայց արի ու տես ազատամարտիկների շահած յաղթութիւնը ինչպէս են մեր իշխանաւորները գոնաթափում:

Այո՛, հայ ենք, մեզ հպարտ ենք զգում, թէեւ երկրով փոքր եւ քանակով քիչ, սակայն մշակոյթով բարձր ենք հանց լեռը մեր Արարատ: Ամենակարեւոր արժանիքը մեր ժառանգականութիւնն (գեն, ծին) է, որն յատուկ է մեր ժողովրդին իր բացառիկութեամբ, ուշիմութեամբ, աշխատասիրութեամբ եւ ընդունակութիւններով, որը պէտք է անարատ պահել ամուսնութիւններով:

Մեր արժէքները պաշտպանելու համար անհրաժեշտ է իւրաքանչիւր հայ իմանայ ինք որտեղից է եկել, ուր են գտնուում իր ակունքները, ինչ պիտի անի որ պահպանուեն դրանք որպէս ազգի գոյութեան խարիսխներ:

Մենք վաղուց պիտի չքանայինք պատմութեան թատերաբեմից, եթէ մեր մշակոյթի հրապուրանքը չլինէր, մեր հոյակապ ու ճկուն, հարուստ ու քաղցրահնչիւն լեզուն չլինէր, մեր գեղազարդ տառերը՝ իւրաքանչիւրը մի նկարչական պատառ, մեր մշակոյթի հոգեկան եւ բարոյական արժանիքները՝ կոթողները, ընտանեկան սովորութիւնները չլինէին: Դժուար կարելի է գտնել օտարների մօտ

բնագրային փոփոխութիւններով, որոնց համար որեւէ պատճառ չունէր: Արդարեւ, ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել հարցման նշաններու գոյութիւնը «Հայրենիք»ի մէջ եւ անոնց չքացումը երեւանեան տարբերակին մէջ: Կէտադրական ու սուղ «ը»-ի տարբերութիւններուն կողքին, կը մնայ պարզել լուսնակայն եւ «լուսնակն» բառերուն տարբերումները երրորդ տան մէջ: Մինչ այդ, «Աստուած» բառին գլխագրումը կը թելադրէ հեղինակային ըլլալը, ինչ որ պէտք է նկատի առնուի ապագայ հրատարակութիւններու մէջ:

Զոյգ բնագիրներուն թուակառային նոյնութենէն կը հետեցնենք, որ հեղինակային տարբերակներու առջեւ չենք գտնուիր, բացի եթէ ենթադրենք, որ Տարօնցիի հրատարակութիւնը կը ներկայացնէ Վարուժանի միեւնոյն օրուան առաջին ներշնչումը՝ որոշ փոփոխութիւններով բանաստեղծութիւնը ալպոմին մէջ ընդօրինակուելէ առաջ: Այլապէս, պէտք է հիմնաւորել խորագիրներու տարբերութիւնը եւ ձօնագրութեան յաւելումը երեւանեան հրատարակութեան մէջ: Բանասիրական այս դեգերումէն ետք, վարուժանեան սոյն փշուրը կը յանձնենք մասնագէտներու ուշադրութեան:

հարազատական ամուսնութիւնը մինչեւ եօթը պորտ արգելուած լինի: Այս բոլոր հոգեբարոյական արժանիքների համար մենք մեծապէս երախտապարտ ենք եռամեծար վարդապետին մեր Մեսրոպ Մաշտոցին, որ լուսազագաթ գիւտով յաւերժի լուսաւոր ճամփայ բացեց մեր ժողովրդի եւ հայրենիքի համար, հիմք դրեց մեր ինքնուրոյն դպրութեան: Վարդապետին որպէս աջակից, խորհրդատու եւ թիկունք դարձան՝ Սահակ կաթողիկոսը եւ Վռամշապուհ արքան, երեք անմահանուն այրեր լուսաշողաղ ծառայութեամբ: Անուրանալի է մեր Ֆարգմանիչ Վարդապետների փառանքի ստեղծած վիթխարի կրօնական, փիլիսոփայական եւ պատմական գրականութիւնը, նրանք իրենց ուսուցիչներին՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթևի հետ միասնաբար ստեղծեցին հայոց դպրութեան «Ոսկեդարը», Աստուածաշունչի «Թագուհի» թարգմանութիւնը:

Ասում ենք՝ մեր մշակոյթի գանձարանը հարուստ է, կասկած չկայ դրա մէջ, ոսկեայ օղակներով հիւսք: Եկէք միասնաբար պահենք ու պաշտպանենք այս հիւսքը նոր օղակներ գոգելով եւ մեր աշխատանքով ու գործով մեր մշակոյթի հուրը թէ՛ս պահենք մեր գաւակների հոգում եւ սրտում, այսպիսով թերեւս կարողանանք այլասերման դէմն առնել:

Շնորհաւոր Մշակոյթի Տօնը: Փառք ու պատիւ մեր դպրութեան արարիչներին ու արարողներին, երախտագիտութիւն մեր մշակոյթի գանձանակը ճոխացնող արւեստից ստեղծագործողներին, մամուլի մշակներին, աշխատակիցներին, Մեսրոպեան ջահը վառ պահող մեր ուսուցիչներին եւ բոլոր նրանց, որոնք իրենց հայապահպանման ծառայութիւնն են բերում առ ի գոյատեւումն սերունդների եւ հայկեան մշակոյթի:

ՄՆԱԿՈՒՅԹ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Արուֆին, Յարուֆին.

Յունիս 14, 1722, Թիֆլիս - Սեպտեմբեր 22, 1795, Թիֆլիս

Միջնադարեան հայ բանաստեղծ-աշուղ: Ամենայն հաւանակա- նութեամբ Սայաթ-Նովայի նախ- նինները Թիֆլիս են եկել Կիլիկեան Հայաստանից: Սայաթ-Նովաների ընտանիքը Թիֆլիսի քաղաքային արհեստաւորներէից էր:

Սայաթ-Նովայի մանկութիւնն ու պատանեկութիւնը անցել է Թիֆ- լիսում: Սովորել է գրել-կարգալ հայերէն, վրացերէն, իմացել է նաեւ արաբերէն այբուբենը: 12 տարե- կանից նրան տուել են արհեստի. սովորել է Չուլհակութիւն եւ կարճ ժամանակում այնքան է հմտացել, որ կտաւ հինելու եւ գործելու նոր դազգահ է պատրաստել: Երգն եւ երաժշտութիւնը նրան հմայել են դեռ փոքրուց: Մինչեւ երեսուն տարեկանը Սայաթ-Նովան կատա- րելագործուել է աշուղական ար- ուեստի մէջ, սովորել եղանակներ եւ պարզ ու խառը չափեր, յօրինել խաղեր՝ յարմարեցնելով յատուկ մեղեդիներ, եւ կատարել ժողովր- դական հաւաքայինների ժամանակ: Հաւանաբար, երկար տարիներ շրջել է Մերձասոր Արեւելքում, եղել Պարսկաստանում, Հնդկաստանում եւ Օսմանեան կայսրութեանը են- թակալ երկրներում, ուխտի գնա- ցել հայ աշուղների հովանաւոր Մշոյ Ս. Կարապետի վանքը՝ Տարօն, մինչեւ որ ձեռք է բերել համընդ- հանուր ճանաչում, մկրտուել Սա- յաթ-Նովա՝ երգի որսորդ: Սայաթ- Նովայի ուսումնասիրութեան գոր- ծում որոշակի դեր են խաղացել Անդրկովկասի հայ աշուղների եւ ուշ միջնադարի հայ տաղերգու- ների, յատկապէս Նաղաշ Յովնա- թանի ստեղծագործութիւնները եւ աշուղ Դոստիի խաղերը: Աւանդա- կան սովորութիւնով ստեղծա- գործական առաջին քայլերը նա սկսել է թրքական խաղերով, յետոյ աստիճանաբար անցել հայերէնի ու վրացերէնի: Գիտակցելով աշուղ- բանաստեղծի բուն դերը հասկա- րանալով, որ գեղեցիկի, կատարե- լութեան իտեալներն ու դաշնութե- ան պատգամները վերարծարծել ու քարոզել է ամէնուր եւ ամէնքի համար, առանց ազգային ու դասա- յին խտրութեան:

Մեզ է հասել Սայաթ-Նովայի աւելի քան 230 խաղ, որոնք ամ- փոփոակ են իր սեփական ձեռքով գրած, որդու՝ Օհանի կազմած ու արտագրած եւ վրաց թագաւորի գրագիր Պենդելենց Յովանէի վա- վերագրած տափթարներում, բա- նահիւսական գանազան ժողովա- ծուններում կամ մնացել են ժո- դովրդի յիշողութեան մէջ եւ աս- տիճանաբար գրի առնուել ու հրա- տարակուել: Հայերէն են թարգ- մանուել Սայաթ-Նովայի վրացե- րէն բոլոր 36 երգերը, իսկ արտայայտաներէն 125-ից 65-ը: Սա-

յաթ-Նովայի յայտնի ամենավաղ թուակին խաղը «Ծովէն ելած թագն մարգարիտ ու մարջան...» վերա- բերում է 1742ին: Ըստ տաղաչա- փական առանձնագատութիւնների՝ Սայաթ-Նովայի խաղերի մէջ հան- դիպում են աշուղական բազմապի- սի ու բարդ չափերով յօրինուած գործեր՝ թեջնիաներ կամ բառա- խաղեր, դազալիներ կամ գագելներ, բեյթ ու դուբայթներ, բայաթիներ, այբբենականներ, ուչլամաներ կամ երիցս կրկնութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ նա աշուղական արուեստի գերագանց գիտակ է եղել: Խաղերից շատերի մեղեդիները մոռացուել են եւ առմիշտ կորել:

Սայաթ-Նովան հայ եւ վրաց աշուղական բանաստեղծութեան մէջ մեծ յեղաշրջում է կատարել մաս- նաւորապէս լեզուի առումով. ըստ էութեան՝ նրանով է սկսուած մայրենի լեզուով խաղը հայ - վրաց իրակա- նութեան մէջ: Սայաթ-Նովան առա- ջինն է, որ յօրինել ու երգել է վրացական խաղեր՝ օգտագործելով պարսկական բանաստեղծութեան ձեւերը. այս նորարարութեան հա- մար հրաւիրուել է պալատ եւ կարգուել Կախեթի վրաց թագա-ւոր Հերակլի II-ի սագանդար:

Շուրջ տասը տարի բանաստեղ- ծը շփուել է պալատական միջա- վայրի հետ՝ յաճախակի Թիֆլիսից անցնելով Թելաւ: Նա երգել ուրա- խացրել է մարդկանց, փառաբանել արդարութիւնն ու ազնուութիւնը, դատապարտել կեղծիքն ու քծնան- քը, ստորութիւնն ու նենգութիւնը, հասարակական ու բարոյական արատները՝ մշտապէս բարձր պա- հելով իր արժանապատուութիւնը: Սայաթ-Նովայի կեանքը խաղաղ չի անցել. դաւեր են նիւթել նրա դէմ, հեռացնել տուել պալատից: Սայաթ- Նովան կոչումով աշուղ է, իր խաղերում ստանձնել է հնագանդ սիրահարի դերը եւ յանուն նուր- ական ու անապակ սիրոյ պատ- րաստ է տանել ամէն գրկանք:


Իբրեւ սիրերգու՝ նա գեղեցի- կի ու կատարելի երկրպագու է, ամենանուիրական ու նրբին զգաց- մունքների արտայայտիչ, չնայած դրանց համար օգտագործած պատ- կերներն ու համեմատութիւնները արեգակի փար, ուշ ձի, թովուզի տախտ, փռանգի սուրաթ եւն շատ են ծաւալային ու երբեմն էլ՝ ան- սովոր: Նրա սիրային երգերն յա- տուկ են նաեւ խոր դրամատիզմն ու բախումները, որոնց պատճառը ոչ միայն բանաստեղծի ողբերգական սերն է, այլեւ կեանքի ու իրա- կանութեան անյուծելի հակա- սութիւնները, սոցիալական անհա- վասարութիւնը, գեղեցիկի ոտնա- հարումը: Սայաթ-Նովային շատ են զբաղեցրել մարդու բարոյական

կատարելութեան ու գեղեց- կութեան հրաւէրը, դարի ու ժամանակի այլանդակութեան, մարդու մանրացման ու մարդկային աղարտման պատ- ճառները, որոնք, ի վերջոյ մնում են անբացատրելի. մարմնականին բաւարարու- լին տուողը չպիտի մոռանայ նաեւ հոգու կամքը կատարե- լը:

Սայաթ-Նովան մեծ ժա- ուանգութիւն ունի ուշ միջ- նադարի հայ գրականութեան ու հոգեւոր մշակոյթի ասպա- րէզում: Նա հայոց գուսանա- կան-ժողովրդական քնարե- գութեան բարձրակէտ է, բնութիւնից շուայլորէն օժտ- ուած արուեստագէտ, որ վե- րածնուել է հայոց քաղաքական ինքնուրոյն կեանքի մասնատ- ման ու անկման պատճառով այլափոխուած գուսանական ար- ուեստը, այն դրել նոր հունի մէջ՝ յեղաշրջելով XVդ. ծայր տւած աշուղական բանաստեղծութեան ձեւն ու բովանդակութիւնը:

Նա հայ իրականութեան մէջ առաջին բանաստեղծն է, որ բազ- մապեզու ստեղծագործութեամբ մեծ դեր է խաղացել Կովկասի ժողո- վուրդների հոգեւոր մերձեցման գործում: Սկսած XVIIIդ. 2-րդ կէսից՝ նրա ազդեցութիւնն են կրել վրացի, ատրպէյջանցի եւ հայ շատ բանաստեղծներ ու աշուղներ: Սա- յաթ-Նովան իր հաստատուն տեղն ունի նաեւ վրաց քնարերգութեան պատմութեան մէջ:

1759-ի կէսերին աւարտուել է Սայաթ-Նովայի՝ իբրեւ բանաս- տեղծի ու երգահան-երաժիշտի կեանքը: 1759-ին Հերակլ II-ի հար- կադրանքով նա քահանայ է ձեռնադրուել Տէր Ստեփանոս անու- նով եւ շատ չանցած ուղարկուել Կասպից ծովի հարաւային ափին գտնուող Էնգելի նաւահանգիստը: Այստեղ երգիչն «Ապաշխարել» եւ արտագրել է Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» պոէ-



մը: Երբ է վերադարձել հայրենիք, ստոյգ յայտնի է:

1766-ին ապրել է Չաքաթա- լայից Շամախի տանող առեւտրա- կան ճանապարհի վրայ ընկած Կա- խի փոքրիկ աւանում, որտեղ ար- տագրել է մէկ ուրիշ ձեռագիր՝ Աստուածաշնչի հատուածներից բաղկացած մի ժողովածու:

1768-ին մահացել է կինը՝ Մարմարը, թողնելով չորս անչա- փահաս գաւակ:

Յաջորդ տարուանից Սայաթ- Նովա-Տէր Ստեփանոսը փոխադրուել է վանք, ծառայել Թիֆլիսում հաս- տատուած Հաղբատի միաբա- նութեան առաջնորդարանում, իսկ 1778-ից, երբ վերաշինուել է Հաղբա- տի վանքը, կարգուել է Սուրբ Նշան վանքի լուսարար: Հետագա- յում միաբանութեան հետ նորից վերադարձել է Թիֆլիս: 1795-ի Սեպտեբերին, Աղա-Մահմադ խան Ղաջարի արշաւանքի օրերին, զոհ- ուել է եւ թաղուած է Ս.Գէորգ եկեղեցու բակում:

Announcing the new private practice of ISSAC HADDAD, M.D. Pediatrics and Adolescents. 2990 E. Colorado Blvd., Suite 105C Pasadena, CA 91107 Tel: 626/793-3700 Fax: 626/793-3702

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065. Dr. Missak Ekmekdjian Chiropractor. Dr. Anahid Ekmekdjian Chiropractor. Ծեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄ

Ծարունակում էջ 7-էն

նմանատիպ փորձ, մենք Գերմանիայում ամեն օր ակնատես ենք լինում դրան, միայն թուրքերը դա չեն ուզում տեսնել: Տնտեսական հարցերում մեր պետությունը նոյնպես կը տուժի, եթէ շուտափոյթ չկարգաւորի երկրի տնտեսական օրէնսդրական դաշտը, այսօրուայ վիճակով մենք լրիւ անպաշտպան ենք թուրքական տնտեսական էքսպանսիայի դիմաց ու թուրքիայի համար հեշտութեամբ կարող ենք վերածուել ներմուծման ու տրանզիտի դաշտի»:

ՀՀ դեսպանը ցանկացաւ ականջալուր լինել բոլոր բանախօսանքի կարծիքներին եւ վերջում ներկայացրեց ՀՀ իշխանութիւններին տեսակէտը արձանագրութիւնների ստորագրման ու հայ-թուրքական յարաբերութիւնների մասին: Պարոն Մարտիրոսեանի ներկայացրած մտքերն ամբողջութեամբ արտացոլում էին ՀՀ իշխանութիւնների տեսակէտները, որոնց հետ ոչ սփիւռքեան բանախօսները եւ ոչ էլ դահլիճում նստած որեւէ մասնակից չհամաձայնուեց: Պարոն դեսպանի ուղարկութեանը յանձնուեց Helsinki Final Act -ի այն պարբերութիւնը, որտեղ բացի սահմանների փոխադարձ ճանաչումից, տարածքային որեւէ պահանջների արձարձումն իսկ ապագայում բացառուած է: Հայաստանի եւ թուրքիայի միջեւ նման պայմանագրի վերահաստատումով տարածքային որեւէ պահանջ մեր կողմից կը դառնայ պայմանագրի խախտում: Դահլիճը մտահոգ հետեւում էր քննարկմանը, այնտեղից ՀՀ ու ԼՂՀ դիւանագիտական բարձրագոյն ներկայացուցիչներին չարտապայտութիւն, նրանց տեսակէտներին դէմ էին բոլորը: Այնտեղ պարզատուեց, որ մեզ համար, որպէս ցեղասպանութեան ենթարկուած ու հայրենազրկուած ժողովրդի գաւակներ, Արեւմտեան Հայաստանի նկատմամբ ունեցած մեր բնական իրաւունքը անժամանցելի է, թուրքական պետութեան ու թուրքերի հետ աշխարհի որեւէ մասում բարիդրացիական յարաբերութիւններ հաստատելուց առաջ, նախ նկատի ենք առնել մեր բնական իրաւունքի, նրանց կողմից մեր գոհերի լիշատակը յարգելու ձեւաչափերը: Առայժմ մենք թուրքիայի կողմից բարի կամքի դրսեւորման որեւէ լուրջ քայլ չենք տեսնում: Այստեղ՝ Եւրոպայում, ամէն օր, կեանքի ամենատարբեր բնագաւառներում, ականատես ենք լինում թուրքական կողմի թշնամական քայլերին, մեր դէմ կազմակերպուած բազմամարդ ցուցերին, Հայ դատի, հայկական համայնքների զարգացման դէմ գերմանական ու եւրոպական կուսակցութիւններում, պառլամենտներում, քաղաքական ու հասարակական ամենատարբեր հարթութիւններում թուրք գործիչների յամառ պայքարին, հայկործան քարոզչութեան, սպառնալիքներին, այստեղ լայնօրէն տարածուող թուրքական մամուլի, հեռուստատեսութեան ու ռատիոյի հակահայ հիստերիային: Այսինքն՝ մենք առայժմ չենք կարող ցոյց տալ թուրքական պետութեան ու թուրքական սփիւռքի որեւէ բարի կամքի դրսեւորման, որեւէ զղջման արտապայտութիւն, ռատի հաւատարմութեանը նրանց անկեղծութեան ու մեզ՝ հայերիս բարեացակամօրէն նրանց ընդառաջ գալու քայլերին:

Կազմակերպիչները նախապէս մշակել էին բազմաթիւ հարցեր, որոնք այսօր մտահոգում են ոչ միայն գերմանահայերին այլ սփիւռքի լայն շրջանակներին: Ցաւօք, քննարկմանը երկուս ու կէս ժամուայ դեսպանի մասնակցութիւնը (նրա ու քննարկմանը ներկայ, բայց երկխօսութեանը չմասնակցաց դեսպանութեան երկրորդ քարտուղարի Պեռլին մեկնելու անհրաժեշտութիւնը տաս րոպէով ընդմիջեց քննարկման յուզախառն ընթացքը) ու քննարկմանը յատկացրած ընդհանուր չորս ու կէս ժամը բաւարար չեղան սպառելու գոնէ հետեւեալ մի քանի հարցերի պատասխանները՝

1. Արդեօ՞ք ինչքանով են Հայաստանի իշխանութիւնները հասկացողութիւն դրսեւորում սփիւռքում այժմ ներկայ եւ օրէցօր աճող դժգոհութիւնների հօր ակիքի նկատմամբ: Եթէ կա՞ն հասկացողութեան որեւէ դրսեւորումներ, ապա որտե՞ղ եւ ինչպիսի՞ հարցերում է առ այսօր այն դրսեւորուել, տեսանելի եղել է որեւէ բանախօս:
2. Ինչքանով է արդարացում, ինչո՞վ է բացատրում Հայաստանի իշխանութիւնների հայ-թուրքական յարաբերութիւնների այս վերջին զարգացումների հարցում տեղեկատուական ու քարոզչական այս, կարելի է ասել զարդանաման կեցուածքը: Արդեօ՞ք աւելի օգտակար չէր լինի, եթէ հարցը թէ հայրենիքում եւ թէ սփիւռքում նախապէս դրուել մեր ժողովրդի լայն զանգուածների քննարկման, հաշուի առնուէր մտաւորականութեան, սփիւռքի փորձառու ազգային կառույցների ու անհատների կարծիքը:
3. Ինչպիսի՞ քաղաքականութիւն ունի այսօր Հայաստանի իշխանութիւնը Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցում, ինչպէ՞ս պիտի շարունակուի այսուհետեւ այդ քաղաքականութիւնը փոփոխուող պայմաններում, ի՞նչ կոնկրետ քայլեր են մշակուել Հայաստանում այդ հարցի յետագայ զարգացման ուղղութեամբ, ինչպիսի՞ պիտի լինի այս հարցում հայրենիքի ու սփիւռքի համագործակցութեան ձեւաչափը: Սփիւռքի կառույցներն արդեօ՞ք արդէն մտածում, ծրագրում են նոր ռազմավարական մօտեցումներ ու մարտավարական քայլեր, կանոններ:
4. Ինչպիսի՞ն է Հայաստանի իշխանութեան վերաբերմունքն այսօր Արեւմտեան Հայաստանի հարցի վերաբերեալ, ինչպիսի՞ն է թուրքերի կողմից հայերին փոխհատուցում տալու հայկական կողմի օրինական պահանջի հարցում Հայաստանի իշխանութիւնների վերաբերմունքը:
5. Հայաստանի իշխանութիւններն այսօր հայ-թուրքական յարաբերութիւններում ինչպիսի՞ տեղ են յատկացնում սփիւռքին, ո՞րը պէտք է լինի այս յարաբերութիւններում սփիւռքի դերը: Ինչպիսի՞ դերակատարութիւն կարող է ստանձնել այս հարցում գերմանահայ 60 հազարանոց համայնքը, հաշուի առնելով, Գերմանիայում աշխարհի ամենամեծ թուրքական համայնքի հարեւանութեան առկայութիւնը:
6. Հայաստանի իշխանութիւնների ներկայ քաղաքականութիւնը հայ-թուրքական յարաբերութիւնների հարցում իշխանութիւնների նկատմամբ սփիւռքում վստահութեան մեծ կորուստ է առաջացրել: Ցաւօք սրտի, վստահութեան այդ կորուստի ընթացքը ամէն օր, ամէն ժամ մեծանում է: Դա մեզ, մեր ողջ ժողովրդին, մեծ վնասներ է բերելու: Ի՞նչ լու-

Ծարունակում էջ 6-էն

նագիր ստորագրէ առանց շահ մը ապահովելու: Սակայն մեզ համար առեղծուած կը մնայ թէ ի՞նչ է եւ ո՞ր է թաքնուած այդ շահը: Երկրորդ առեղծուած մը - նման պայմանագրի մը ի՞նչպէս եւ ի՞նչ տրամաբանութեամբ համաձայնութիւն կը յայտնեն հայաստանեայց եկեղեցին, բարեգործութեան համար հիմնուած հայկական հաստատութիւն մը, ցեղասպանութեան ճանաչումը հետապնդող մարմին մը, եւ ճաշկերպութի սեղաններուն շուրջ դանակապատռաքարներով ապետութեամբ պարապող խմբակ մը:

Կը վերադառնանք մեր սկզբնական հարցադրումին: Սերժ Սարգսեանի կողմէ ինչո՞ւ է մետասանրորդ ժամի այս անհեթեթ այցելութիւնը երբ միայն քանի մը օրեր մնացած են՝ Արձանագրութիւններ կոչուած անձնատուութեան համաձայնագրի ստորագրութեան: Մանաւանդ երբ կանխագուշացուեցած է մեզ՝ թէ որեւէ փոփոխութեան յոյսեր չփայտիայնեք անոր բազմաթիւ անընդունելի, միակողմանիօրէն բանաձեւուած հակահայ պայմաններուն առնչութեամբ: Պատասխանը պարզ է: Հայաստանի ապօրինի նախագահը փորձեց իր իշխանութիւնը տարածել սփիւռքահայութեան վրայ եւս՝ իրեն յատուկ մենատիրական ոճով մեր կողորդէն ներս խրելու համար Արձանագրութիւններու խայտառակութիւնը: Ապախնեցաւ պատասխանատուութեան փախուստի գաւառական ժամանակավրէպ, անպարկէշտ մտածելակերպին՝ որով գործած սխալներն ու ձախակերութիւնները կը կարծէ քողարկել սնամէջ լաւ ու ծանր խօսքերու կրկնասացութիւններով: Չվարանեցաւ անարգելու սփիւռքահայուն իմացականութիւնն ու ողջախոհութիւնը: Կարծր փաստներն անտեսելով, ան առանց որեւէ համոզիչ փաստարկի, աղայական գիւղապետի մը ոճով «հաւաստիացուց» թէ Արձանագրութիւնները հայութեան ի նպաստ են, մինչ

ծումներ կ'առաջարկէիք, ի՞նչ քայլեր էք տեսնում այդ մեծացող ճեղքի առաջն առնելու, այն նուազագոյնի հասցնելու ճանապարհին:

7. Արցախի հարցում ի օգուտ Ատրպէյճանի ամէն անգամ թուրքիայի իշխանութիւնների յարձակողական միջամտութիւնը արդեօ՞ք պանթուրքիզմի մի իւրօրինակ, մոտենում դրսեւորում է: Թուրքիայի իրաւասութեան մէջ չմտնող այդ հարցը արդեօ՞ք չի կարելի միջազգային ատենաներում ներկայացնել հենց այդպիսին: Ե՞րբ Հայաստանի իշխանութիւններն իրենց բանակցութիւններում ու յայտարարութիւններում խեղճ կեցուածք ընդունելով Արեւմտեան Հայաստանի նկատմամբ, մեր բնական իրաւունքի հարցը ամէն անգամ լուսկեաց շրջանցում են, աւելի սանձարձակ չե՞ն դարձնում թուրք դիւանագէտների ապօրինի միջամտութիւնն ու պահանջը Արցախի ազատագրուած հողերի հարցում:
8. Կաշառակերութեան, մաֆիական համակարգի, սոցիալական, քաղաքական, բարոյական, տնտեսական ծանր վիճակում տառապող, անօրինութեան ճիրաններում համարեա մահամերձ լինող Հայաստանի արդեօ՞ք այսօր պատրաստ է այսպիսի հասցեակցութեամբ համազգային այնպիսի հարցի լուծման գնալ, ինչպիսին հայ-թուրքական յարաբերութ-

ամբողջ փաստաթուղթի շօշափելի փաստը ճիշդ հակառակը կ'ապացուցէ հայոց ցեղասպանութեան, հողային պահանջատիրութեան եւ Արցախի անկախութեան վերաբերեալ:

Հայութեան առնուազն իննսուն տոկոսը սփիւռքի մէջ մերժեց ու դատապարտեց նախաստորագրուած Արձանագրութիւնները: Պատիւ սփիւռքահայ երիտասարդութեան որ արժանի արհամարհանքով, քննադատութեամբ ու «Ո՛չ»երով դիմաւորեց անձնատուութեան փերեզակութեան համար ժամանած ինքնակոչ նախագահը: Շատ քիչ էր թիւը իր կողմնակիցներուն: Սակայն իր անսխառունակ շրջապատյտի աւարտին, չզարմանանք երբ երեւանէն հասնի իր ձայնը՝ «ճանուցանելու» համար թէ սփիւռքահայութեան խոշորագոյն տոկոսը իր համամտութիւնը յայտնած է համաձայնագրին, թէեւ եղած են որոշ թիւով հակառակ կարծիքներ:

Սերժ Սարգսեան իր խայտաբեղէտ շքարտմբով փորձեց խաղի բերել սփիւռքահայութիւնը: Եկաւ մեզ հրապուրելու իր թունաւոր պտուղներով: Տեսանք զինք իր ասաւոր բարոյական սնանկութեամբ: Եւ անգամ մը եւս վերահաստատեցինք թէ հայոց աշխարհի ինքնակոչ թափաւորը ամբողջովին մերկ է:

Ծանօթութիւն.
Պատահականութեան հեզմակալ բայց բացատրելի խաղով մը էջ 2-ի եւ այս յօդուածներում խորագրերը թելադրուած են պատմական մոյլնադրիւթէ՛մ Յուլիոս Կեսարի արտասանած մշանաւոր պատգամէ՛մ՝ veni, vidi, vici (եկայ, տեսայ, յաղթեցի) որով ան բարեկամի մը կը պատմէ իր յաղթանակները: Երկու յօդուածագիրները իրարմէ՛ բոլորովին անկախաբար ընտրած են խորագրերը: Յատկանշական է Յուլիոս Կեսարի հետ այս երկու յօդուածներու «հերոսիկ» համեմատութիւնը, որ սակայն գուտ ոճական է եւ կանգ կ'առնէ այստեղ: Այդ երկուքին անոնց միջեւ որեւէ տեսակի մեմոնութեան չակնարկուի:

Իւնների զգացուն բնագաւառն է: Աւելի նպատակայարմար չէ՞ք գտնում այդ հարցերի ողջ համակարգը այսօր, առանց օր իսկ կորցնելու, Հայաստանի ԳԱ-ում, պետական համալսարանում ու սփիւռքի գիտական ու քաղաքական կառույցներում յատուկ եւ ազատ մասնագիտական ստուգման ու վերլուծութեան ենթարկել, քննարկումների դնել, լրջօրէն պատրաստուել դիւանագիտական դժուարին մարտահրաւրներին, յետոյ նոր թուրքերի հետ յարաբերութեան մէջ մտնել: Այս ու բազմաթիւ այլ հարցեր, որոնք այսօր կախուած են սփիւռքեան երկնակամարում ու նմանապէս տանջում են գերմանահայ համայնքին, այդ երեկոյին, ցաւօք, այդպէս էլ անպատասխան մնացին: Դահլիճում պետական այրերի ու միւս ներկաների կարծիքներում վառ արտայայտուած անհամաձայնութիւն, յստակ բեւեռացում կար: Մասնակիցներից մէկը երեկոն հակիրճ բնորոշեց «երկուսն ընդդէմ իննսունի, կամ հակառակը»: Ժողովրդի ու իշխանութիւնների միջեւ եղած անջրպետը միթէ՞ք արդէն անդունդի է վերածուած, միթէ՞ք ժողովրդի ձայնը, այս հարցում արդէն ճիշդ ու աղաղակը, չեն լսելու ՀՀ իշխանութիւնները:

ՀԱՅ ԱԿԱԴԱՄԻԿԱՆԱՆՆԵՐԻ ՎԱՐՑՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԻԱ

«ԹՈՒՐՔԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԵԼՈՒՑ ԱՌԱՋ՝ ՀԱՅԻ ՀԵՏ ՀԱՇՏՈՒԵ՞Լ ԵՍ»

Շարունակում է 5-էն

յում կարտախաղի ժամանակ ձեր դիմացինին խաբել, բայց մեզ երբէք չէք կարող խաբել, քանի որ ձեր մտաւոր կարողութիւնը շատ թոյլ է մեզ խաբելու համար: Բռնի ուժով ինչ-որ բան անելը դեռ չի նշանակում, որ դուք ձեր մտաւոր կարողութիւններով էք դրան հասել:

Պարն Սարգսեան, փաստօրէն դուք ասում էք՝ ովքեր, որ փորձում են ձեզ համոզել ազգակործան ճանապարհից վերադառնալ, չարաչար սխալուում են ու շատ «միամիտ» են, որ դուք չէք հրաժարուելու ոչ մի դէպքում, անգամ եթէ դա ազգի ապագան վտանգելու գնով լինի: Իսկ համայնքի հաւաքածու անողնաշար եւ սոցիալականները պարզ է, որ չէին համարձակուելու ձեզ հակաճառել, քանի որ նրանց ու նրանց նմանների հովանու շնորհիւ է, որ դուք դեռ Հայաստանի նախագահ էք, աւելին անամօթաբար ձեզ համարում էք «Համայն Հայութեան նախագահ»: Պրն. Սարգսեան, դուք ձեր խորհրդականների կողմից պատրաստուած գրութիւնը, որը նոյնութեամբ կարգացիք Հայաստանի կուսակցապետերի (նոյն փարիզեան անողնաշարների շարքին սոցիալների մի շարան), եւ հանրային խորհուրդի ներկայացուցիչների (մի այլ սոցիալների շարան) հետ հանդիպման ժամանակ: Դուք այնքան գիտելիք ու մտաւոր կարողութիւն չունէք, որ կարողանաք առանց նախապէս ձեւակերպուած, սրբագրուած գրութեամբ ձեր մտքերը արտայայտել:

Պրն. Սարգսեան, մի հետ նայէք ու տեսէք թէ մինչեւ հիմա ինչ էք արել, եթէ անկեղծ Հայ լինէիք պէտք է հարակիրի անէիք, կամ էլ անմիջապէս հրաժարական տայիք. Ստորեւ ներկայացնեմ ձեր միամտութեան մի շարան, որոնք ամենակարեւորներն են, էլ չեմ խօսում ներքին քաղաքականութեան մասին: Եւ այսպէս.

Դուք, Թուրքիայի հետ յարաբերութիւններ հաստատելու, Գիւլին ֆուլթալի հրաւիրելու մասին յայտարարութիւնը, Հայաստանի ԱԺ-ում (գոնէ ձեւականօրէն) անելու փոխարէն, եւ դա նախապէս ժողովրդի ու մտաւորականութեան քննարկմանը դնելու փոխարէն, յայտարարել էք Մոսկուայում,

Թուրքիայի հետ բանակցութիւններում՝ սահմանի բացման հարցում ընդունել էք Թուրքիայի կողմից պարտադրուած հայափնաս նախապայմաններ,

Համաձայնուել էք Ապրիլի 24-ից առաջ հանդէս գալ համատեղ յայտարարութեամբ, ինչը բարձրացրեց Թուրքիայի հեղինակութիւնը եւ ձախողեց Միացեալ Նահանգների եւ այլոց կողմից Հայոց

Յեղասպանութեան ճանաչմանը հասնելու ջանքերը,

Համաձայնուել էք Թուրքիայի հետ ունեցած ներկայ սահմանները «վերահաստատել», եւ դրանով վերջ դնել Հայաստանի տարածքային պահանջներին,

Համաձայնուել էք Հայոց Յեղասպանութեան փաստերն ուսումնասիրող համատեղ պատմական յանձնաժողով ստեղծելու Թուրքիայի պահանջի հետ, որպէսզի Յեղասպանութեան իրողութիւնը կասկածի տակ դնէք ու ազատուէք դրանից:

Թոյլ էք տուել Թուրքիային քիթը խոթել Արցախի հարցով հայ-ատուրքայեճանական բանակցութիւնների մէջ,

Դուք միամտօրէն հաւատացել էք Թուրքիային եւ ձեր միամտութեան ջանքերի շնորհիւ բարձրացնում էք Թուրքիայի հեղինակութիւնն ու ազդեցութիւնը ամբողջ տարածաշրջանում:

Դուք այնքան միամիտ էք, որ հաւատում էք Թուրքիայի կեղծ պնդումներին, թէ նա վարում է Հայաստանի հետ լուրջ բանակցութիւններ,

Եւրոպացիները դէմ են Թուրքիայի Եւրոմիութեան անդամակցեցում, իսկ դուք միամտօրէն պնդում էք, որ նա պէտք է մտնի Եւրոմիութիւն: Նոյնիսկ դրանով չէք բաւարարուում ու ձեր արտգործնախարարը յայտարարում է, որ ինքը բացում է Եւրոպայի վերջին փակ սահմանը,

Դուք մի քանի անգրագէտ, բռնի ուժով կապիտալ կուտակած «գործարարների հետ գրուցել էք», ու հաւատում էք, որ Թուրքիայի հետ սահմանը բացելով Հայաստանի տնտեսութիւնը կը զարգացնէք, բայց այնքան միամիտ էք, որ չէք էլ կարող պատկերացնել, թէ դա միայն Թուրքիայի տնտեսութեան զարգացմանն է ծառայելու,

ԼՂՀ բանակցութիւնների սեղան չվերադարձնելը, մադրիսեան սկզբունքների ընդունումը, որը նախատեսում է՝ ազատագրուած տարածքները Ատրպէյճանին յանձնել, ԼՂ-ինքնորոշման հարցը անորոշ ապագային թողնել, Ատրպէյճանցի փախստականների վերադարձ, Հայ փախստականների մասին խօսք չլինել եւ այլն եւ այլն: Իսկ դուք այդ բոլորը միամտաբար կուլ էք տալիս ու այդքան միամտութիւնից յետոյ ձեզ քննադատողներին էք «միամիտ» անուանում:

Ով գիտէ, հնարաւոր է, որ դուք միամիտ չէք, այլ ընհակառակը, դուք շատ ճարպիկ էք ու ճարպիկօրէն փորձում էք, քանի դեռ ուժն ձեր ձեռքն է՝ ձեր ու ձեր շրջապատի շահերին ծառայեցնել համայն հայութեան ողջ շահերը...

ԵՐԿՈՒՏՈՂՈՎ

- 2040 տարի առաջ՝ Բ.Ա.31թ. Սեպտեմբեր 2-ին գոհուեցաւ Հայոց Թագաւոր Արտաւազդ Բ.-ը:
- 135 տարի առաջ՝ Սեպտեմբերին ծնաւ ազգային-ազատագրական շարժման գործիչ Մուրադ Սեբաստացին՝ Մուրադ Խրիմեանը (1874-1918):
- 140 տարի առաջ՝ 1869թ. Հոկտեմբերի 2-ին ծնած է Հնդկաստանի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ Մոհանդաս Կարամչանդ Կանտին (1869-1948):
- 87 տարի առաջ՝ 1922թ. Հոկտեմբերի 3-ին կազմակերպուեցաւ Հայաստանի հեռագրական գործակալութիւնը(այժմ՝ Արմէնպրէս):
- 110 տարի առաջ՝ 1899թ. Հոկտեմբերի 3-ին ծնած է իտալահայ արուեստաբան Վարդան Արսլանը (1899-1968):
- 100 տարի առաջ՝ 1909թ. Հոկտեմբեր 4-ին ծնած է ամերիկահայ գրող Անդրանիկ Անդրէասյանը (1909-1997):
- 52 տարի առաջ՝ 1957թ. Հոկտեմբեր 4-ին ՍՍՀՄ-ում յաջողութեամբ արձակուեցաւ Երկրի՝ աշխարհում առաջին արհեստական արբանեակը:
- 50 տարի առաջ՝ 1959թ. Հոկտեմբերի 6-ին ծնաւ Արցախի հերոս Աշոտ Ղուկասյանը:(1959-1992):

ՊՕՂՈՍ ԱՐԱՊԵԱՆ


Շարունակում է 13-էն

այժմ անթաղ ու լքուած այդ հողվորտիքին մէջ՝ քոսացած տապանաքարերու մէջէն անորը գտնելու համար: Բայց գերեզմանոցը հիւսիսի կողմէն կէսուակէս խորուած եւ դարտըկուած իր տապաններէն՝ մարգարանի վերածուած էր...: Ի գուր որոնեցինք անհետացող Ամիրաներու այդ շեղջակոյտին մէջ շիրմը համեստ զբաղումով այդ մեծանուն հայուն որ շուրջ երեք քառորդ դար՝ աստարած էր ազգակիցներու եւ իսլամներու մտաւորական շարժումին: Հոն, ամալի մահաստանին ծայրը, առ լե-

փի մը կուշտին կանգուն մարմարեայ հոյակապ աղբիւր մը իր նոր կառուցուածքին մէջ շատ բան կը խօսէր արդէն՝ հայու անյայտացող դամբաններու մասին...»:

Պօղոս Արապեանը հանդիսանում է արեւմտահայ իրականութեան ամենակարկառուն դէմքերից մէկը, ով իր երկար տարիների քրտնաջան ունուիրուած աշխատանքի շնորհիւ Օսմանեայն կայսրութիւնում տպագրական գործը վերածեց տպագրութեան արուեստի:

«Հայագրի Գուտենբերգի» սկսած գործը շարունակեցին նրա որդիներն ու թոռները:



Հ.Բ.Ը.Մ. ԱՐՏԱԻԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԹՈՒԱԿԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐ 25

Նախագահութեամբ ՏԻՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼՊԵՐ ԵՒ ԹՈՎԷ ՊՕՅԱԵՆԱՆԵՐՈՒ

Գլխաւոր բանախօս՝ ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Տեսաերիզի Յուցարդրութիւն ԱՐՏԱԻԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ԵՐԵՄԱՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2009 - Կ.Ե. ԺԱՄԸ 5:00-ԻՆ Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան Մշակութային Համալիրին մէջ 2495 East Mountain Street, Pasadena, California 91104

ՍՈՒՏԵԸ ԱԶԱՏ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

www.massisweekly.com Updated every Friday

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

massis2@earthlink.net

ՄԱՐԱԶԴ



ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ
(Ծնեալ 1927, Հալէպ)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրելի ամուսնոջն, հօր, մեծ հօր, եղբոր եւ ազգականին՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ-ի, որ պատահեցաւ Հինգշաբթի, Հոկտեմբեր 1, 2009-ի երեկոյեան, յետ կարճատեւ հիւանդութեան:

Հանգուցեալին Տան Կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, Հոկտեմբեր 6-ի երեկոյեան ժամը 7-ին, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցիին մէջ (Վալն փողոց, Հովիվուտ): Իսկ, Եկեղեցւոյ Կարգը՝ յաջորդ օր Չորեքշաբթի, Հոկտեմբեր 7-ի առաւօտեան ժամը 11-ին, միեւնոյն եկեղեցիին մէջ: Այնուհետեւ, Թաղման կարգը տեղի ունեցաւ Forest Lawn-ի Hollywood Hills գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Այլրին՝ Տիկին Լենա Ասլանեան/Համալեան
- Որդին՝ Տիար Արամ Համալեան
- Հարսը՝ Տիկին Գայեանէ Շահինեան
- Թոռնիկները՝ Տէր եւ Տիկ. Գարեգին եւ Մարինէ Համալեան
- Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Վարդուհի Տէօվլէթեան
- Տիար Անդրանիկ Համալեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արշալոյս Համալեան եւ զաւակները
- Քոյրերը՝ Տէր եւ Տիկ. Լինտա Կոկոնեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Վարդուհի Զէյթունեան եւ զաւակները:
- Եւ համայն Համալեան, Ասլանեան, Շահինեան, Տէօվլէթեան, Մըսրեան, Զէյթունեան, Պարսամեան, Բարսեղեան եւ Կակոսեան ընտանիքները:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկ. ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ-ի մահուան տխուր առիթով «Ստեփան Սապահիւլեան»-ի վարչութիւնը եւ անդամները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին, զաւակին, թոռներուն եւ համայն պարագաներուն:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկ. ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ-ի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի այրիին, զաւակին, թոռներուն եւ համայն պարագաներուն:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ-ի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Նորայր եւ Կուսակցութեան անդամները կը յայտնեն իրենց ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի այրիին, զաւակին, թոռներուն եւ համայն պարագաներուն:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ

(ԿԼԷՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)

GLOABCAST SATELLITE

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան

ժամը 10:00-ից 12:30

Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՇՈՒԹԻԼԵԱՆ-ՊԷՔՍԷՅԵԱՆ



ՍՕՍԻ ՇՈՒԹԻԼԵԱՆ-ՊԷՔՍԷՅԵԱՆ

ՍՕՍԻ ՇՈՒԹԻԼԵԱՆ-ՊԷՔՍԷՅԵԱՆ-ի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Հոկտեմբեր 11, 2009 Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ

1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով: Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքմիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



"Քաջ Նապար" հանդեսը եւ հեռուստաժամը
Ներկայացնում է

10-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,
ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՂԱՄ
ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՄԱՐ
(հիմնադ 1999թ.)

Կիրակի, Նոյեմբեր 1, 2009
երեկոեան ժամ 4-12-ը

Sponsored by

"KACH NAZAR" Magazine & TV Show

10 ANNIVERSARY

NATIONWIDE **TELETHON**

ON SUNDAY
NOVEMBER 1, 2009

to Benefit CHRISTMAS FUND FOR ARMENIAN ORPHANS
and DISABLED CHILDREN

and The RESTORATION OF CHILDREN'S HOMES (Est. 1999)

**ՕԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱՆՆԵՐԻՆ ՆՐԱՆՑ
ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ԲԱՄԱՐ**

HELP OUR CHILDREN TO BUILD THEIR FUTURE . . .

AMGA
CHANNEL 280
Glendale, CA
From 4:00 pm
12midnight

P.O. BOX 250038 • GLENDALE, CA 91225

Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070

TAX ID # EIN 26-3208049

E-mail: forourkids99@gamil.com

